№ 13 ՇԱԲԱԹ, 21 ՅՈՒՆՎԱՐԻ 1912 ՇԱԲԱԹ, 21 ՅՈՒՆՎԱՐԻ № 13

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1912 Թ. ՀԱՄԱՐ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 50 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 1 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը 85 կ. և 15 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, յունվարի 23-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
Յ. ԱԲԷԼԵԱՆԻ բենեֆիսն
կը ներկայացնէ
ՀԱՅՐԵՆԻՔ
(ԳՐԱԾ ԴԸ ՐԻԶՕՕՐ. LA PATRIE)
Դրամա 6 արարուածով, Սարդուի, Թարգմ. Նելեանի։
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբն է երեկոյեան ժամը ճիշդ 8-ին։
Տեղերի գները աւելացված են։ Ռեժիսոր՝ Յ. ԱԲԷԼԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Վ. Մամուլեան, Գ. Կաֆեան
31. 2—1

„ԱՐՕՐԻ" ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Արօր» ամսագրի խմբագրութիւնը որոշել է այս 1912 թ. իբրև յաւելուածական պրեմիա տալ իր բաժանորդներին նախկին տարվայ նման մի ստուար և նշանաւոր գիրք (անցեալ տարիների յաւելուածներից կազմվեց Վիկտոր Հիւգօյի «Իննսուն երեք» մեծ վէպը)։

Այդ յաւելուածը լինելու է

„ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ"

մի մեծ և ստուար գործ, Հայաստանի Հին և Նոր Աշխարհագրութեան հետ միասին, հեղինակութիւն Հ. Առաքելեանի, բաղկացած I և II հատորներից։ Այս տարի տրվելու է I հատորը։

Տպվելով «Արօրի» մէջ իբրև յաւելուած, տարվայ վերջին կարելի կը լինի կազմել ամբողջ գործը և ունենալ մի լիակատար և հանրամատչելի «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ», որի պակասը վաղուց զգալի է։ «Հայոց պատմութեան» I հատորը բաղկացած կը լինի մօտ 500 էջերից և կարժենայ առանձին 3 րուբլի։ Սակայն «Արօրի» բաժանորդները, վճարելով 4 րուբլի «Արօրի» համար, կունենան տարվայ վերջին ձրի այդ գիրքը։

Որպէսզի կարելի լինի որոշել քանի օրինակ տպել, «Արօրի» խմբագրութիւնը խնդրում է ցանկացողներին որքան կարելի է շուտով բաժանորդագրվել «Արօրին» կամ վերանորոգել բաժանորդագրութիւնը։

Բաժանորդագինն է 4 րուբլի՝ «Մշակի» բաժանորդների համար, և 6 րուբլի՝ ոչ-բաժանորդների համար։

Բաժանորդագինը ուղարկել այս հասցէով. Тифлисъ, Редакція газеты „МШАКЪ", для передачи „Apopy".—Tiflis, Rédaction „Mschak", pour „Aror".

* * *

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
I ՀԱՏՈՐԻ
բովանդակութիւնը

I. ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ.—Հին Հայաստանը։ Սահմանները։ Տարածութիւնը։ Բնական կազմութիւնը։ Լեռները. Ջրերը (ծովակներ, լճեր, գետեր)։ Օդ և կլիման։ Հանքային հարստութիւն և բոյսեր։ Ֆլօրան։ Ֆաունան։ Քաղաքական, սօցիալական կազմութիւնը և հին վարչական բաժանումը։ Արդի Հայաստանը և նրա բաժանումը։ Օսմանեան, Ռուսական և Պարսկական Հայաստան։ Ազգաբնակութիւնը։ Զբաղմունք, վաճառականութիւն, արդիւնաբերութիւն։ Կրօնք (հինը և նորը՝ հեթանոսական և քրիստոնէական)։ Հայոց եկեղեցին և նրա համառօտ պատմութիւնը և կազմակերպութիւնը։ Հայոց լեզուն և գրականութիւնը։

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.—ա) Նախապատմական օրջան։ Հայերի ծագումը ըստ հայ պատմագիրների։ Հայերի ծագումը ըստ օտար աղբիւրների։ Նախահայկական ցեղեր՝ Խալդեր, Հէթեթներ, Ուրարտացիներ։ Ուրարտուի թագաւորութիւնը և նրա մղած պատերազմները։ Ուրարտական գլխաւոր թագաւորները։ բ) Պատմական օրջան։ Արմէնների ծագումը և հաստատվելը Հայաստանում։ Հին-հայկական կամ Արարատեան թագաւորութիւնը։ Հայերի դաշնակցութիւնը մեդիացիների և պարսիկների հետ։ Արարատեան թագաւորութեան անկումը և Հայաստանի նուաճումը պարսիկներից։ Պարսկական տիրապետութիւնը Հայաստանի վրա (519—330 թ. Ն. Ք.)։ Հայաստանի քաղաքական, վարչական, զինուորական, կուլտուրական կազմակերպութիւնը։ Մակեդօնական տիրապետութիւնը (330—189 թ. Ն. Ք.)։ Նոր-հայկական կամ Արարատեան թագաւորութիւնը։ Մեծն Տիգրան և նրա հիմնած պետութիւնը, նրա պատերազմները Հռոմի հետ։ Արշակունեաց հարստութիւնը, նրա կանգնումը, տիրապետութիւնը և վախճանը (150 թ. Ն. Ք.—433 թ. Ք. յ.)։ Հայաստանի հարևան երկիրները և ազգերը։

4—1

ԵՂԲ. Ա. եւ Ա. ՄԻԼՕՎՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
Գօլօվինսկի պր., Կադէտսկի կորպուսի դիմաց
սրանով յայտարարում է, որ ՅՈՒՆՎԱՐԻ 19-ից մինչև 26-ը
նշանակված է
ՏԱՐՎԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՕԹՆՕՐԵԱՅ ՍՈՎՈՐԱԿԱՆ
ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ
մետաքսէ, բրդէ, քաթանէ և բամբակէ ապրանքների և անգլիական մահուդից բազմաքանակ կտորների, նոյնպէս և պատրաստի ԶԳԵՍՏՆԵՐԻ և ԲԼՈՒԶԿԱՆԵՐԻ։
ԳՆԵՐԸ ՇԱՏ ԷԺԱՆ ԵՆ
Էժան վաճառքի օրերը ճաշի ժամանակ խանութը փակ կը լինի ժամը $2^{1}/_{2}$-ից մինչև 4-ը։
(19,21,24) ար. 21. 4—3

Լոյս տեսաւ եւ վաճառվում է հռչակաւոր
ֆրանսիացի գրող
ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕՅԻ
ԻՆՆՍՈՒՆ-ԵՐԵՔ
նշանաւոր վէպի հայերէն թարգմանութիւնը
„ԱՐՕՐ" ամսագրի
հրատարակութեամբ
—o—
Այս կլասիկական չքնաղ վէպը, որի նիւթը վերցված է ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից, պէտք է կազմէ ամեն մի մատենադարանի զարդը և լինի ընթերցանութեան ամենացանկալի նիւթ։
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Ի նկատի ունենալով, որ տպված է միայն 400 օրինակ, ուստի ցանկացողները պէտք է շտապեն վաղօրօք ստանալ, ուղարկելով իրանց պահանջը և դրամը «Մշակի» խմբագրութեան։
Գիրքը բաղկացած է 432 մեծադիր էջերից
10—10

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլիններով։
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10. Տելեֆոն № 792.
(ա.օ.) ար. 989. 100—80

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

«Մշակի» անցեալ օրվայ համարում մենք զետեղեցինք բժ. Ա. Զարզարեանցի կոչը ուղղած զօկերին՝ հիմնելու զօկական թանգարան։

Դա մի առաջարկ է, արժանի ուշադրութեան, եթէ մանաւանդ նրան ընդարձակենք և գործադրենք ոչ միայն զօկերի, այլ հայութեան և միւս հատուածների վերաբերութեամբ։

Արդարև, այն, ինչ դրդում է մտածել և հոգալ զօկական թանգարանի մասին, թելադրում է նոյնատեսակ թանգարաններ հիմնել Արարատեան, Ղարաբաղի, Սալմաստի, Շամախու, Թիֆլիսի, Ղազախի, Վանի, Զէյթունի և այլ բարբառներով խօսող հայ հատուածների համար։

Հայութիւնը, չը նայելով իր փոքրաթիւ լինելուն, բաղկացած միայն $3^{1}/_{2}$ միլիոն հոգուց, պարունակում է իր մէջ բարբառներ, որոնք այնքան հեռու են միմեանցից, ինչպէս բուլգարերէնը և սերբերէնը ռուսերէններից, որոնք ունեն իրանց յատուկ գրականութիւնները։

Եւ այդ բարբառների թիւը քիչ չէ։ Հայութեան հատուածները հին աւատական նախարարական կազմակերպութեան դարաշրջաններում, իսկ աւելի ևս հնումը ուրարտական բաժանբաժան քաղաքական կացութեան ժամանակ՝ ապրել են կղզիացած, մէկը միւսից անկախ, երբեմն նոյնիսկ միմեանց թշնամի և ներհակ, ինչպէս օտար և խորթ տարրեր։

Եթէ աւելացնենք դրա վրա և այն, որ հայութեան զանազան հատուածները ենթարկվել են զանազան արտաքին ազդեցութիւնների, օրինակ՝ Վանայ ծովի շրջակայքը ասորական ազդեցութեան, Մեծ Հայքը՝ յունական, Արարատեան դաշտը՝ պարսկական, Գուգարքը՝ վրացական, Աղուանքը՝ կովկասեան լեռնականների ազդեցութիւններին, կը տեսնենք, որ հայ տարրի ազգագրական էութիւնը ըմբռնելու համար կարևոր է ուսումնասիրել նրա առանձին հատուածները, զուգընթացաբար ուսումնասիրելով և բոլոր այն հանգամանքները, որոնք թողել են հետքեր նրա ազգագրական զանգուածի վրա։

Եւ անկասկած՝ այդտեղ հանդէս է գալիս ընդարձակ ազգագրական թանգարանի ծրագիրը, որը ժամանակով, անշուշտ, և կիրագործվի։

Մենք, շօշափելով ազգագրական ընդհանուր հայկական թանգարանի խնդիրը, ամենևին չենք ցանկանում փոխել բժ. Ա. Զարզարեանցի առաջարկը և ամենևին մտադիր չենք զօկական թանգարանը դարձնել ընդհանուր հայկական։ Ոչ։ Յաճախ մենք տեսնում ենք կեանքի մէջ, որ ցանկանալով չափազանց ընդարձակել գործը՝ մարդիկ ձեռնարկում են իրանց ոյժերից վեր [illegible] գործում ոչ խոշոր ծրագիրը և ոչ այն փոքրը, որ նրանք նախաձեռնել էին։

Թող այն անձերը, որոնք ձեռնարկել են զօկական թանգարանի հիմնադրութեանը, առաջ տանեն իրանց դիտաւորութիւնը թէ այդ փոքրիկ ծրագիրը իրագործելու համար և թէ օրինակ ծառայելու հայութեան միւս հատուածներին՝ ազգագրական հաւաքածուներ կազմելու համար։

Եւ, անտարակոյս, մի քանի ժամանակից յետոյ հանդէս կը գան նոյնատեսակ թանգարաններ զանազան տեղերում։

Ապագայում այն նիւթերը, որոնք հաւաքված կը լինեն, կամ կը մտնեն Հայ Ազգագրական Ընկերութեան թանգարանի մէջ, կամ կը զետեղվեն համապատասխան գաւառական կենտրոնների մէջ հիմնված տեղական թանգարաններում և կամ վերջապէս ժողոված կը լինեն երկ-երկու նմուշ թէ ընդհանուր և թէ գաւառական թանգարանները ճոխացնելու նպատակով։

Մեր ժամանակի ոգին և կեանքը բաւական արագօրէն փոխում են մարդկանց։ Այն յեղաշրջումը, որ կատարվում է տնտեսական, կուլտուրական և հասարակական ասպարէզներում, կերպարանափոխում է այսօրվայ իրականը, կենսականը, այժմէականը և ժամանակակիցը և դարձնում նրան հին և պատմական, առարկայ ազգագրական թանգարանի։

Թող նոր կեանքը տանի մարդկանց դէպի բարեշրջման հեռանկարները, իսկ թանգարանը պահպանի պատմական նախապատկերը։

Ա. Քալանթար

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԻՒՐԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

19 յունվարի

Մոսկվա.—Անգլիական հիւրերը նայեցին պալատները։ Նախաճաշելուց յետոյ նրանք այցելեցին համալսարանը, ուր եղաւ հանդիսաւոր ընդունելութիւն, այցելեցին Դոնեան կօզակների գունդը, նայեցին ջիրիդը։ Ապա հիւրերն այցելեցին Տօլստոյեան և տնայնագործական զեմստվային թանգարանները։

Ի պատիւ անգլիական հիւրերի վաճառականութիւնը և բօրսային ընկերութիւնը խնճոյք տուին։ Կրեստովնիկովը առաջին բաժակն առաջարկեց կայսրի թանգագին առողջութեան համար, յետոյ խմեց անգլիական թագաւորի կենացը, ողջունեց հիւրերին Մոսկվայի առևտրա-արդիւնաբերական աշխարհի կողմից։

Քաղաքային դումայում կայացաւ խնճոյք։ Քաղաքագլուխը ողջունեց հիւրերին։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

19 յունվարի

Պետերբուրգ.—Կայսրին բաղդ ունեցան ներկայանալու պարսից դեսպան Միրզա Իսահակ-խանը, Կովկասի Փոխարքայի դիւանապետ Պետերսոնը և Պետական Դումայի նախագահի օգնական իշխան Վոլկոնսկին։

Կ. Պոլիս.—Ռաշիդ փաշան մեկնեց Սոֆիա գահաժառանգի չափահաս դառնալու առիթով կատարվող հանդէսներին մասնակցելու։

Ֆինանսների մինիստրը և օսմանեան դրամատան տնօրէնը ստորագրեցին $1^{1}/_{2}$ միլիոն թիւրքական ֆունտի փոխառութիւն։

Սոֆիա.—Յատուկ գնացքներով եկան զանազան պետութիւնների ներկայացուցիչները։

Զագրեբ.—Ուսանողները ցոյց սարքեցին, պահանջելով Զագրեբի համալսարանի իրաւունքները հաւասարեցնել միւս համալսարանների իրաւունքներին հետ։ Ոստիկանութիւնը ցրեց ցուցարարներին, թոյլ չը տալով ճառեր արտասանել։ Մի քանի ուսանող վիրաւորվեցին հրացանների կոթերով։

Ուսանողների անկարգութիւնների պատճառով համալսարանը փակվեց։

Լիսաբոն.—Կատարվեցին նոր ձերբակալութիւններ։

Քաղաքի կենտրոնում ռումբի պայթումից սպանվեց 1, երկու հոգի ծանր վիրաւորվեց։

Բանուորական սինդիկատների միութեան մէջ երևան հանվեց ռումբեր պատրաստելու արհեստանոց։

Պարիզ.—Չը նայած գործադուլին, երկու հոգի ուզեցին մեկնել։ Ընդհարում եղաւ գործադուլաւորների և ոստիկանութեան միջև։ Երկու ոստիկան և մի շօֆեր վիրաւորվեցին։ Գործադուլները շրջեցին մեքենան։

Բելգրադ.—Միլովանովիչի կաբինէտը, պատճառաբանելով որ սկուպշչինայում անհրաժեշտ մեծամասնութիւն չը կայ աջող աշխատանքի համար, առաջադրութիւն ներկայացրեց թագաւորին սկուպշչինան արձակելու մասին։ Թագաւորի անհամաձայնութեան դէպքում Միլովանովիչը մտադիր է կաբինէտը հրաժարեցնել։

Մեքսիկա.—Քաղաքից 36 մղոն հեռաւորութեան վրա տեղի ունեցաւ տասժամեայ ճակատամարտ Զապատասի կողմնակիցների և կառավարական զօրքերի միջև։ Առաջինները ջարդվեցին և փախան, կորցնելով 30 հոգու։ Ընդամենը նրանք մի շաբաթում կորցրին 200 մարդ։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

19 յունվարի

Տօկիօ.—Պաշտօնական «Ցիւնո-Շիմբունը» ասում է. «Գերմանիան աշխատում է իր ձեռքը ձգել չինական հանրապետութեան 100 միլիոնի փոխառութիւնը, որպէս զի չակէ իր անաջող քաղաքականութիւնը։ Ճապօնացի դրամատէրերը պէտք է գործեն առանց տատանվելու, այլապէս հետևանքները անուղղելի են»։

Կազմակերպվեց ընկերութիւն՝ ճնշում գործ դնելու կառավարութեան վրա՝ Չինաստանում հանրապետութիւնը ճանաչելու նպատակով։

Մուկդէն.—Ջժէնցզիատունից հաղորդում են, որ Արևելեան Մոնգոլիայի իշխանների համագումարը չը ջողվեց։ Իշխանների մեծ մասը չեկաւ զանազան պատրուակներով։

Մուկդէն.—Գեն.-նահանգապետը պատուիրագրեց Ցիցիկարի նահանգապետին անյապաղ վերականգնել չինական իշխանութիւնը Խուլուջուիրի շրջանում։ Նահանգապետը հրաժարվեց, պատճառ բերելով զօրքերի քչութիւնը։ Քաղաքացիները և վաճառականութիւնը գեն.-նահանգապետ Չժաօսէրսիւնին բողոքեցին զօրքերի և ոստիկանութեան կամայականութեան ու խստութիւնների դէմ, որոնք անարեկել են ազգաբնակութիւնը։

—

Չիֆու.—Դէնչժօուֆու մեկնեցին 300 նորակոչ զինուորներ և հետախոյզների մի խումբ 3 թնդանօթներով։

Քաղաքում հանգիստ է։ Վենդիէն քաղաքը Հիւսիսային Շանդունում անցաւ յեղափոխականների կողմը։

—

Տօբրուկ.—Օդագնաց Բօգին կապիտան Մօնտիի հետ բարձրացան Ֆարմանով և թռիչք կատարեցին թշնամու մեծ բանակի գլխավերևը, աջողութեամբ ռումբեր նետելով։ Թշնամին գնդակահարեց աէրօպլանը։ Մօնտին թեթև վիրաւորված է։

—

Կուլջա.— Կառավարական զօրքերի անաջող ընդհարումների պատճառով Ուրումչինի նահանգապետը համաձայնեց յեղափոխականների հետ խաղաղ բանակցութիւններ սկսել։

—

Ուրգա.—Լուր է պտտվում, որ մօնղոլները միջոցներ որոնելով իրանց բիւջէն աւելացնելու համար, նպատակ ունեն ռուսներին յանձնել լեռնային հարստութիւնների մշակման գործը։ Ձեռնարկողներն արդէն գալիս են Ուրգա։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

19 յունվարի

Ուրմիա.—Նահանգապետի կարգադրութեամբ հրապարակով կախվեց Ուրմիայի ֆէդայիների նախկին պարագլուխներից մէկը՝ մաշադի-Իսմաիլը, որ ամբողջ չորս տարի ահ ու սարսափ էր տարածել ունևոր մարդկանց վրա, ահագին կարողութիւն էր դիզել կողոպուտներով և փորձում էր ապստամբութիւն առաջ բերել ռուսների դէմ։

Սալմաստի Թամար գիւղի ռուսահպատակ կապալառուն քիւրդերի յարձակումների վերաբերմամբ պաշտպանութիւն խնդրեց կապիտան Գասօնովից։ Կապիտանը եկաւ յիսուն մարդով և [illegible], որ կորցրեց երեք մարդ։

Գիլման եկան 35 Թիւրք ասկէրներ իբրև հիւպատոսատան պահակներ, որպիսին մտադրութիւն կայ բանալ այս օրերս։

Ջուլֆա—Խոյ—Սալմաստ—Ուրմիա ճանապարհի վրա [illegible] որը երթևեկում են ապա[illegible]ով։ Ուրմիա եկած Թիւրքական [illegible] պատոս Տաբէց-էդդինը, որ մի [illegible]ան մարդ էր, յետ կանչվեց. Այդ [illegible] նպաստաւոր տպաւորութիւն [illegible] առանձնապէս քրիստոնեաների վրա։

—

Լօնդօն.—Րէյտէրը տեղեկացաւ, որ այն տեղեկութիւնը, որ իբր թէ ենթադրութիւն կայ առաջարկելու պարսից կառավարութեան ընդունել ռուսական և մեծ-բրիտանական հովանաւորութիւնը, վերաբերում է սոսկ այն խնդրին, որ աջակցութիւն է ցոյց տրվելու Պարսկաստանին՝ աւելի հաստատ կառավարութիւն հաստատելու։

ԴԷՊՔԵՐԸ ԹԱՒՐԻԶՈՒՄ

—

Թաւրիզ, 12 յունվարի

Պատերազմական դրութիւնը շարունակվում է։

Թիւրքերից ձերբակալութիւններ լինում են յաճախ. պատահում են և հատ-հատ կախման դէպքեր։ Ընթերցողներին ծանօթ Պետրոս Անդրէասեանի կախվելուց յետոյ սպասվում էր, որ նրա և հօրեղբօր որդոց պատկանած տունը ցրիւ տային և կործանէին, ինչպէսին կատարվեց և կատարվում է դեռ բոլոր մահվան դատապարտվածների համար. սակայն Թեմակալ Կարապետ սրբազանի քանիցս արած դիմումների և խնդրանքների շնորհիւ՝ դաշտային ատեանը կարեկից գտնվեց ազատել տունը և յանձնել տէրերին անվնաս։

Ինչպէս գրել էի նախորդ թղթակցութեանս մէջ, Անդրէասեանի դիակը թաղվեց Լիլաւայի ս. Սարգիս եկեղեցու գաւթում. այս ստրկօղական պարագան մի նոր առիթ է ընծայել պրօվօկատոր խմբակին այլ և այլ մտացածութիւններ սարքել ու տարածել, թէ հայերը մեծ պատւով են թաղել մահապարտին, թէ այդպիսին ցոյց է նշանակում իշխանութեան և այլն. մինչդեռ Թաւրիզի առաջնորդարանը կամեցաւ շուտափոյթ թաղման արարողութիւնը կատարել տալ եկեղեցու գաւթում տեղն ու տեղը, որպէսզի հանգուցեալի բազմաթիւ ազգականներից և ծանօթներից բաղկացած թափօրը փողոցներով չանցնէ ու զանազան չարամիտ ենթադրութիւնների առիթ չը տայ։ Բայց պրօվօկատօրները հանգիստ չեն և ամեն մի չնչին երևոյթ մեծացնում ու հաղորդում են իշխանութեան։

Անտարակոյս ի գործ դրվող պրօվակացիայի ազդեցութեամբն էր, որ Անդրէասեանի թաղման օրվայ երեկոյեան առաջնորդարանում ստացվեց ռուսաց ընդհ. հիւպատոս Միլլէրի պաշտօնական զեկուցագիրը, որի մէջ յայտնում է հիւպատոսը, որ բանակի ընդհանուր հրամանատարի կարգադրութեամբ յայտնում է ի գիտութիւն, թէ կասկածներ կան, որ հայերի մէջ չարամիտ անձինք մտածում են անհարեկէ գործողութիւններ ի գործ դնել. այդ դէպքում մի անհատի փոխարէն տասնեակներով հայեր կարող են զոհ գնալ և այլն։ Զեկուցագիրը վրդովեցուցիչ էր. սրբազանը խիստ հրաւիրեց ժողովրդին Ղալա Թաղի եկեղեցին, ուր հաւաքվել էր խուռն բազմութիւն, ու խօսեց ազդու քարոզ։ Սրբազանը յայտնեց դեսպանի զեկուցագիրը ժողովրդին, բացատրեց ռուսաց ներկայութեան նշանակութիւնը Պարսկաստանում, պարզեց, թէ ինչպէս նախանցեալ տարիները ռուսները փրկեցին Ատրպատականն ու Թաւրիզը սովից և վերահաս պատուհասներից. և ապա պարզաբանեց ռուսաց վերաբերմունքը ընդհանրապէս արևելեան քրիստոնեաների պաշտպանութեան նկատմամբ. հետևաբար,—շեշտեց սրբազանը,—մենք ոչ թէ երկիւղից, այլ բարոյական պարտականութեան գիտակցութեամբ միայն որևէ անախորժ քայլ չը պէտք է թոյլ տանք մեզ. թէպէտ Թաւրիզաբնակ հայ հասարակութիւնը վերջին ընդհարումների ժամանակ ցոյց տուեց, որ ոչ մի թշնամական արարք չէ ունեցել դէպի ռուսները և նրանց կարգ ու կանոնները։ Ցետոյ կողմնակի կերպով լսեցի, որ հիւպատոս Միլլէրը զեկուցագիրը ետ է ուզել առաջնորդից և ստացել, երևի հասկացած լինելով, որ հայերի մասին եղած կասկածներն ու ամբաստանութիւնը արդիւնք են տեղի ունեցող պրօվօկացիայի։

Այսօր պատերի վրա երևացին հիւպատոս Միլլէրի յայտարարութիւնը՝ ուղղված Թուրք և հայ հասարակութեան, որով ազդարարում է իւրաքանչիւր ոճրի և չարամիտ գործողութեան համար խստագոյն պատիժ և պահանջում միանգամայն, որ տներում զէնք ունեցողները տանեն և յանձնեն իշխանութեան կամ Ալա-Ղափուում բանակի ընդհանուր հրամանատարին, սպառնալով խուզարկութիւնների դէպքում խիստ պատիժ։ Զէնքերը յանձնողներն ստանալու են ստացական։ Նշանակում է արդէն, որ Թաւրիզը գտնվում է խուզարկութիւնների նախօրեակին։

Առհասարակ Թաւրիզի հասարակութիւնը սարսափի տակ է. սարսափի ներքոյ են և հայերը՝ գտնվելով 2—3 սուրի մէջ տեղ։ Թուրք ազգաբնակութեան ապագայ սարսափի ուրուականը այն առարկութեան պատճառով, թէ ինչու հայերը մասնակից չեղան ռուսաց դէմ եղած ընդհարումներին։ Երկրորդ՝ պրօվօկատորների սարսափը, որ ամեն մի քայլէ պտոյտ է գալիս անմեղ ժողովրդի գլխին, և վերջինիս կատարած պրօվօկացիայի հետևանքով՝ ռուսաց սուինների սարսափը։ Ի նկատի ունենալով ամենից վտանգաւորը՝ պրօվօկացիայի յարաճուն գործունէութիւնը, առաջնորդ Կարապետ եպիսկ. վճռել է մի քանի ազդեցիկ և ծանօթ անձնաւորութեանց հետ դիմել հիւպատոսին, եթէ հնար է՝ նաև բանակի հրամանատար գեներալին ու միևնոյն ժամանակ բացատրել պրօվօկացիայի գոյութիւնը և նրա չարամտութիւնը դէպի հայերը, համոզել նրանց հայ ժողովրդի անմեղութեան ու բարի տրամադրութիւնների վերաբերմամբ և խնդրել վստահութիւն և պաշտպանութիւն։ Առ այժմ միակ միջոցն է համարվում Թեմակալի ձեռնարկած միջոցը, և կարելի է հաւատալ, որ վերջապէս վերջ կը գտնեն տիրող արհաւիրքն ու սարսափը։

Ժամանակն հասած ենք համարում խորհուրդ տալ մեր Թայֆայական գործիչներին, որոնք թէպէտ անմասն են եղել վերջին դէպքերում, ուղղակի հեռանալ երկրից, եթէ անկեղծ բարեկամ են հայ հասարակութեանը և նրա բարօրութեանը։

Բանակի նախկին հրամանատար գնդապետ Ջապլին մեկնել է Կովկաս. ասում են՝ գնալու է նաև հիւպատոս Միլլէր, որին կը փոխարինէ Րաշտի հիւպատոսը։

Հայկազուն

—

Պետրոս-խան Մելիք-Անդրէասեանի մահապատժից յետոյ, երկու օրվայ ընթացքում ձերբակալութիւններ և մահապատիժներ տեղի չունեցան ռուսական պատժիչ զօրախմբի կողմից։

Դրա փոխարէն այս երկու օրվայ ընթացքում Շուջա-ուդ-Դօվլէն Շեշկիլան քաղաքամասում, խանութների առաջ կանգնեցրել է մի նոր կախաղան, որի վրա ճօճում են նորանոր մարդիկ, որոնց մէջ աչքի է ընկնում Թաւրիզի ոստիկանապետի օգնական Մամեդ-խանի դիակը, որը միաժամանակ «Շամկաղան» գիւղի վրա կռւող ֆէդայիների գլխաւորն էր։ Զօրքի հրամանատար գեն.-մայոր Վօրօպանովը քաղաքի ոստիկանապետ է նշանակել 6-րդ զօրագնդի գնդապետին, իսկ իբրև պրիստաւներ՝ 5—6 օֆիցէրների, որոնք հերթով պահպանում են քաղաքը, շրջում են պահակներով, կատարում են խուզարկութիւններ և ձերբակալում են կասկածելիներին։

Քաղաքի փողոցներում փակցված են յայտարարութիւններ Վօրօպանովի անունից, որով երկու շաբաթվայ ընթացքում առաջարկվում է քաղաքի ազգաբնակութեան (հայերին և Թուրքերին) յանձնել զէնքերը ռուսաց հիւպատոսարանին։ «Հակառակ դէպքում, այն մարդիկ, որոնք չեն յանձնի զէնքերը, խստիւ կը պատժվեն»։ Զէնքերը պահանջվում են նաև Շուջա-ուդ-Դօվլէի մարդկանցից։

Յունվարի 11-ին խուզարկութիւնները և ձերբակալութիւնները սկսվեցին նոր թափով։ Ձերբակալված են կրկին մի քանի ականաւոր Թուրքեր։ Սրա հետ միաժամանակ Շուջա-ուդ-Դօվլէի ֆերրաշները խուզարկութիւն կատարեցին Թիւրքահպատակ լուսանկարիչ Ստեփան Ստեփանեանի բնակարանում, որը փախել է քաղաքից։ Շուջա-ուդ-Դօվլէի մարդիկը նրա բնակարանն են մտել կտուրից։ Նրա ֆերրաշները գրաւելով մահապատժի ենթարկված Մելիք-Անդրէասեանի տունը՝ կրում են նրա ինչքը։

Երէկ Շուջա-ուդ-Դօվլէն երկու ժամ տեսակցութիւն ունեցաւ ռուսաց հիւպատոսի հետ։

Շուջա-ուդ-Դօվլէի դէմ դժգոհութիւնը մեծանում է։ Կախաղանները ժողովրդի վրա վատ տպաւորութիւն են թողնում և քաղաքում նկատվում է խիստ ընկճված դրութիւն, մինչև իսկ յուսահատութեան աստիճան։

Ուրմիայում ձերբակալված են 18 հայեր և Թուրքեր։

Խոյում ձերբակալված են 10 հայեր։

Ամիր Հաշմաթին Թիւրք իշխանութիւնները չընդունեցին և, լուրերին նայած, նա ամրացել է Ուրմիայի մօտ գիւղերից մէկում և շրջապատված է ռուս զօրքերով։ Հէնց այժմ ձերբակալեցին կրկին մի հայի՝ Սարգիս անունով։ («Баку»)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

—

Անգլիական պարլամենտի անդամներից մէկը, Չ. Մինհօլանդ, որ այս օրերս արձակված օսմ. պարլամենտի նախագահ Ահմէդ Րիզա բէյի բարեկամն է և միևնոյն ժամանակ անգլիական խաղաղասիրական ժողովի անդամ, վերջերս Լօնդօնից հետևեալ բաց-նամակն է ուղղել Ահմէդ Րիզային։

Այդ նամակը տպված է Կ. Պօլսում հրատարակվող Թիւրքական «Մէսլէք» օրաթերթում, որը շարունակութիւնն է համարվում «Ալէմդար» օրաթերթի և որի խմբագիրն է Թահիր Խայրէդդին-բէյ, որը Կ. Պօլսի ազգաբնակութեան կողմից նոր ընտրված պատգամաւորն է օսմ. պարլամենտում։

Ստորև առաջ ենք բերում յիշեալ բաց-նամակը՝ արտատպելով «Բիւզանդիոնից», որ թարգմանաբար լոյս էր ընծայել այդ [illegible]

Վսեմ. Ահմէդ Րիզա բէյ,

Արտաքոյ կարգի եղանակով մը այս նամակով պարզած տեսութիւններս կը ներկայացնեմ առաջնակարգ ու կարևոր միջավայրերու կարծիքները։ Այս տեղեկութիւնները, այս տեսակ ժամանակի մը մէջ, թէ ձեր վսեմութեան և թէ ընկերներուս համար խիստ կարևոր են։ Ինչ որ կը ներկայացնեմ ձեզ, ձեր թշնամիներուն կողմէ կրնայ գործածուիլ օսմ. շահերուն դէմ խիստ անհարկու ազդեցութեամբ մը. նաև կրնայ ջնջել այն համակրութիւնը և սէրը, զորս քաղաքակրթեալ աշխարհը ձեզ ցոյց կուտայ. նորէն կրնայ բորբոքել հայերուն դէմ գործուած հարստահարութեանց հետևանքով քրիստոնեայ աշխարհին մէջ առաջ եկած նողկանքն ու թշնամութիւնը և բնաջինջ ընել մեծ մասը այն արդիւնքներուն, զորս քանի մը շաբաթէ ի վեր առաջ բերին մեզ նման խաղաղասէրներ։ Այս ամօթալի յայտնութեանց նայելով, Իտալիա ոչ թէ ընդհանուր թշնամի մըն է, այլ կրնայ նկատուիլ պատուհասիչ հրեշտակ մը, որ պաշտօն ունի վրէժը լուծել անմեղ սպաննեալներու և հարստահարեալներու։ Ձեր կառավարութիւնը այդ մասին պէտք է գործէ, և շուտով գործէ։ Հայաստանը պէտք է ազատէք իր գտնուած վիճակէն։ Ալբանիան պէտք է ազատէք թշուառութենէ ու տառապանքէ։ Արաբիոյ մարդկային մասավաճառութեան վերջ տալու էք։ Ֆրանսայի մեծ յեղափոխութեան ժաքօբէնները ի զուր ընդօրինակող գաղտնի կոմիտէն պէտք է թողուք։ Մանաւանդ պատերազմական վիճակին վերջ մը տալով խօսքի ու մամուլի ազատութիւնն ալ պէտք է վերադարձնէք։ Ասոնց ամենքն ալ ժամ առաջ պէտք է գործադրէք։ Ձեր կայսրութեան ամբողջութիւնը վտանգի տակ կը գտնուի։ Եթէ ձեր կառավարութիւնը աւազակութիւնները չարգիլէ և Հայաստանի մէջ ու այլուր այսքան չփոթութիւն առաջ բերող ոճրագործները, մարդասպաններն և գողերը չնուաճէ ու չպատժէ, այն ատեն բնաւ յարգ ու վարկ պիտի չընծայեմ ձեր կառավարութեան գործադիր վարչութեանը։ Տէր նախագահ, լսածներս գէշ մի՛ հասկնաք. շատ լուրջ են և կարևոր։ Իտալիա թէև Ափրիկեան Տրիպօլսոյ վրայ կը քալէ, սակայն Թիւրքիոյ դիրքն այսօր շատ զօրաւոր է։ Բայց հիմա Թիւրքիա կը գտնուի ճամբուն ճիւղաւորուած մէկ կէտին վրայ։ Ես, որ իրապէս բարեկամութիւնս ցոյց տալ կուզեմ Թիւրքիոյ, կը յանձնարարեմ, որ այս ծանրակշիռ արդիւնքին հանդէպ գործէք ազգի մը փառքին վայել կերպով և բնաւ ժամանակ չկորսնցնէք։

Կարող էք ահ ու սարսափ ազդել Ալբանիոյ և Արաբիոյ մէջ գործուած քաղաքական ոճիրներու անամօթ թելադրիչներուն, բարձր պաշտօններու վրայ գտնուող այդ տխմարներուն և անպաշտպան հայերը սպաննող վայրենիներուն։ Փոխանակ կործանելու այն աջակցութիւնները, զորս այսօր հողագունդին ամբողջ քաղաքակրթեալ աշխարհը ձեզ կընծայէ, կայսրութեան բոլոր ոյժն ու տարրերը օրինաւորութեան մէջ միացնելով, մարդկութեան յարգանքին արժանացէք։ Դուք արդարութեան աշխարհին կը դիմէք, մինչդեռ դատարան մտնելու համար մարդու մը ձեռքերը աղտոտ ըլլալու չէ։ Ես ծածուկ բան մը չեմ ըսեր։ Խօսքերս իբրև բարեկամի մը խորհուրդները ընդունեցէք։ Ձեզ շատ տարիներէ ի վեր կը ճանչնամ և իբրաւ բարեկամ ենք. ասոր համար է, որ այսքան բացայայտ կը խօսիմ։ Կրեան թէ ճշմարտութիւնը որքան ալ դառն ըլլայ, դուք նկատի կառնէք։ Ներկայիս խիստ կարևոր է ցոյց տալ նոյն տեսակ ձիրք մը։ Այդ տեսակ ձիրք մը ոչ միայն ձեզմէ… այլ խորհրդարանէն ալ կը սպասենք։ Օսմ. հայրենիքը անկումէ փրկելու ուրիշ միջոց չկայ։ Ամերիկա երթալու վրայ եմ։ Կը յուսամ, թէ իմ դիմումիս իբրև պատասխան՝ գոհացուցիչ գործեր պիտի տեսնեմ և ես ալ, ասկէ վերջը, Ամերիկայի մէջ Թիւրքիոյ մասին ըլլալիք հարցումներուն և մանաւանդ խաղաղասիրական մարմիններու ներկայացուցիչներու առաջին գումարումին մէջ՝ պիտի կրնամ գոհացուցիչ յայտարարութիւններ ընել։ Եթէ պէտք ունիք որ անգլիացիներուն և ամերիկացիներուն բարեկամութիւնները շարունակեն, կը յանձնարարեմ, որ շատ գործնական կերպով նկատի առնէք ըսածներս։ Փոխանակ եղբէն հասկնալու, թէ առանց աշխարհի գիտութեանը պէտք չէ շարունակէ Աբդուլ-Համիդի վարչական դրութիւնը, եթէ հիմա հասկնաք, ձեր մասին աւելի նպաստաւոր կըլլայ։ Միութեան և Յառաջդիմութեան կոմիտէն շատ ընդարձակ շրջանակի մը մէջ խաբեց ազգը։ Այս վիճակը աւելի ևս պիտի չկրնայ շարունակել։ Պէտք չեմ զգար ներողութիւն խնդրել շատ աչքառօրէն խօսելուս համար, վասնզի մարդկութեան անունով կը խօսիմ։

Մարդկութիւնը աշխարհագրական սահման չունի։ Մարդկային օրէնքը աւելի զօրաւոր և ազդեցիկ է միջազգային այն օրէնքներէն և իրաւունքներէն, զորս կաշկանդեք շահելու ձեր երկրին կողմը, երկիր մը, որ ամեն կողմ զարգացեալ Թիւրքիա մը կը նկատուի, և որ իրականին մէջ ըսպաննելի և անարեկումի վարչութիւն մըն է։ Թիւրքիոյ արդի վարչութիւնը հայրենասիրական ըլլալէ աւելի շատ [illegible] և անպաշտպանելի ըլլալու աստիճան դառն բան մըն է։ Այդ վարչութեան միջամտողներուն և մասնակցողներուն ամենուն համար կործանումն ու աղէտը ստոյգ բան մըն է։ Կը խնդրեմ վստահ ըլլաք այն բարեկամութեան համար, զոր կը տածեմ ձեզ և այն տէրութեան նկատմամբ, որուն փոխանորդն էք։

Ձեր անկեղծ բարեկամը՝

Չ. Է. Մինհօլանդ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔՆԵՐ

—

Թիֆլիս, 12 յունվարի

«Մշակ» լրագրի յօբելեանի առիթով ընդունեցէք իմ շնորհաւորութիւնս։

«Մշակի» 40-ամեայ գործունէութեանը ես չեմ հետևել, այլ հետևել և շնորհաւորում եմ «Մշակի» յօբելեանը 1903 թւից մինչև 1912 թ.։ Ահա այդ ժամանակից ես առաջին անգամ սկսեցի հետաքրքրվել առօրեայ հասարակական կեանքով, և «Մշակը» իր հրապարակախօսութեամբ զարկ տուեց իմ զարգացմանը։

Իմ անհատական համոզմունքն է, որ «Մշակը» երկար տարիներ հնչեցրել է իր ազնիւ խօսքը զանազան հասարակական-դպրոցական-գրականական, երկրի արդիւնաբերութեան և գիւղատնտեսութեան զարգացման վերաբերեալ հարցերի մասին և զարկ է տուել հասարակական մտքի յղացման և հասարակական կեանքի առաջադիմութեան։ Նա կրթել և դաստիարակել է մի քանի սերունդներ և առաջ է բերել հասարակական գործիչների մի ստուար խումբ հասարակական բոլոր ասպարէզներում։

«Մշակը» կատարել է այդ մեծ դերը, և ես յոյս ունեմ, որ հրապարակախօսութեամբ «Մշակը» կը կրթէ, կը դաստիարակէ և առաջադիմութեան ճանապարհով կը մղէ էլի շատ սերունդներ։

Իմ անկեղծ զգացմունքներով շնորհաւորում եմ «Մշակի» յօբելեանը։

Պօստ-հեռագրական պաշտօնեայ՝

Յովհ. Խիզանեան

—

Թաւրիզ, 9 յունվարի

Ընդունեցէք ջերմ շնորհաւորութիւնս ու անկեղծ բարեմաղթութիւններս «Մշակի» 40-ամեակի առիթով։ Գ. Ջիլենդիրեան

—

Աղայի-չէն, 15 յունվարի

Շնորհաւորում ենք «Մշակի» 40-ամեակը և նրա օգտակար գործունէութիւնը։ Ի սրտէ ցանկանում ենք աջողութիւն ապագայում շարունակել երկար դարեր այդ օգտաւէտ գործունէութիւնը։

Աղայի-չէն գիւղի ներկայացուցիչներ՝

Ալ. Պետրոսեանց, Բ. Ծատուրեանց,
Ա. Շահնազարեանց, ուսուցիչ Ս. Տէր-Մարտիրոսեանց։

—

Խանքենդ, 13 յունվարի

Սրտի անհուն ու անկեղծ զգացմունքով շնորհաւորում եմ «Մշակի» 40-ամեայ յօբելեանը։ Ցանկանում եմ դեռ շատ 40-ամեակներ անցկացնել և յաւիտեան բարձր պահել «Մշակի» դրօշակը, որի հովանու տակ ինչպէս մինչև այժմ՝ այսուհետև ևս պէտք է շատ մատաղ սրտեր անվեհ, ծլեն և ծաղկեն։

Թող գիտակից հայ հասարակութիւնը երախտագէտ լինի և մեծարէ «Մշակի» ներկայ մեծ տօնը այն գիտակցութեամբ, որ դրանով կատարած կը լինի իր բարոյական պարտականութիւններից գերագոյնը։

Փառք և պատիւ «Մշակի» անխոնջ ղեկավարներին։

Փառք ձեզ, ով յանուն արդարութեան գրական ասպարէզում մարտնչող զինուորներ։ Աբեղնազով Ասլանեան

—

Հին-Նախիջևան, 13 յունվարի

«Մշակի» 40-ամեակի տակ՝ ես փառաբանում եմ այդ պատկառելի ժամանակամիջոցում յաղթանակով տարած այն մեծ գործը, որի շնորհիւ մենք լուսաւորվելով հանդերձ՝ անզոհ գաղափարի ինքնագիտակցութեան ենք հասել։

Մօտ կիսադարեան տիտանական ժամանակում—սուլթան Համիդի արիւն օրերից մինչև մեր ազգակործան ոճիրների ներկան—«Մշակը» որևէ ազգօգուտ գաղափարի կամ հարազատի դէմ ոչ մի արգելք չը գտնելով՝ այնու ամենայնիւ կարողացել է կործանիչ ոյժին դիմադրել և փրկութեան դրօշակը ծածանել, որի համար, այո, փառք նրան… Ալէքս. Պարդեան

—

Իգդիր, 7 յունվարի

Չը գիտեմ՝ մեր գիտնական հայկաբանները իրանց մեծահատոր բառարաններում ինչպէս են բացատրում մշակ բառը, որը այնքան խորը թափանցել էր մեր սրտերում իր լայն իմաստով, որ կարողանում է մեր սիրտը, մեր հոգին կապել ներկայումս անմահ Արծրունու թանգագին ժառանգի՝ «Մշակի» հետ։

Մեր կեանքի ո՞ր խաւում չէք տեսնի մշակին մայր երկրի հետ քրտնելիս, հրապարակներում վիզը կոր, մէջքը կռացած ծանր բեռան տակ, ախ ու վախը կրծքում, արտասուքը աչքերում լճացած։ Ապա այն գրական «Մշակը», որ գրիչը ձեռքը, գլուխը հազար ու մի ցաւերով տանջված, սիրտը լեցուն՝ ժողովրդի ցաւերով, ջարդված, փշրված, սակայն ապագայի հեռանկարով, յոյսերով ոգևորված, անվրդով հոգով չը դաւաճանելով իր գաղափարին՝ ամբողջ կեանքը զոհ է բերում ժողովրդի բարօրութեան։

Ահա այդ իմաստալից բառն էր «Մշակը», որ ազատ խօսքով, հանճարեղ գրչով՝ անյողդողդ կամքով բացատրեց անմահ Արծրունին լի հաւատով զինված։

«Մշակը» բոլորեց իր գործունէութեան 40 տարին։ Ուստի այդ առիթով սրտի անհուն բերկրութեամբ ողջունում ենք նրան և հաստատ յոյս յայտնում, որ նրա այժմեան անխոնջ վարիչները մեր սիրելի թերթի մեծ հիմնադրի գծած շաւղով առաջ, միշտ առաջ կը տանեն տոկունութեամբ «Մշակի» դրօշակը ներկայիս նման խիստ պատասխանատու ժամանակներում, ուր հասարակական միտքը անկաշառօրէն ղեկավարելու համար մեծ տակտ է հարկաւոր։

Սաթ. Զաքարեան

ԱՇԽԱՏԱԿՑԵՆՔ, ԱՅԼ ՈՉ ԽԱՆԳԱՐԵՆՔ

III

Ասացի, որ «Մշակը» հայ ժողովրդի լաւագոյն իղձերի, գեղեցիկ ակնկալութիւնների և ձգտումների ստեղծագործութիւնն է. որ նրա 40-ամեակի տօնը մեր մտաւոր ու հասարակական վերածնութեան շարժման տօնն է։

Արդ՝ ո՞վ կարող է խորթ զգալ իրան մի այդպիսի պատկառելի յօբելեանական տօնախմբութեան մէջ։

Մի կողմ թողնենք չկամութիւնն ու նախանձը։

Անշուշտ նա միայն, ով նրա 40-ամեայ պատմական աշխատանքի մէջ չէ տեսնում իր հասարակական պարտքի կատարումը։

Նա միայն, ով կարող էր հանրային գանձատուփի մէջ ձգել իր անհատական լուման, կարող էր հատուցանել իր պարտքը՝ թէ իբրև սոսկ մարդ, թէ իբրև միևնոյն ազգի անդամը՝ հայ ժողովրդին, բայց զլացել է։

Ով մեր ազգային-հասարակական կեանքի վերածնութեան այդ լուսաւոր շրջանում՝ նոր, շինարար ջանքերի ու մտաւոր յեղաշրջումի հսկայ կերտուածքի վրա կարող էր դնել իր բաժին աղիւսը, բայց չէ դրել։

Ու չէ էլ համակրել ու խոչընդոտ է եղել միշտ։

Այդպիսիների համար՝ իրաւ որ «Մշակի» 40-ամեայ յօբելեանական տօնը՝ իրանց ինքնասպանութեան, իրանց պարտութեան և խայտառակութեան բոթաբեր ղօղանջն է։

Մահասարսուռ ղօղանջը։

Իսկ դուք…

Դու, հայ շինական, որ կազմում ես հայրենիքի ամենահսկայ զանգուածը, ամենից դիմացկունը և ամենից եռանդոտը ազգութեան կերտուածքի մէջ։

Դու, որ քո կոշտացած ձեռքերի հալալ աշխատանքով, քո ճակտի հալալ քրտինքով դառնում ես աշխարհի ապրուստը, բայց միշտ էլ մնում կիսաքաղց, միշտ էլ շահագործված, միշտ զուրկ ու չարքաշ կեանք վարում։

Դու շատ լաւ գիտես, դու խորապէս համոզված ես, որ «Մշակը» քեզ է նուիրաբերել իր ամբողջ կեանքը։

Քո ծանր աշխատանքի, քո քրտնաթոր մշակութեան շարունակութիւնն է ընտրել նա իր համար։

40 տարի ապրել է քեզ հետ անբաժան, լծակցել է քեզ քո նեղ օրերին։

Իր խոհերի, մտահոգութիւնների ու մշտական զբաղմունքների առարկայ է դարձրել նա քո դառն վիճակը, ջանացել է բարելաւելու քո տնտեսական, կրթական ու բարոյական թշուառ վիճակը, թեթեւացնելու գոյութեանդ կռիւը թէ բնութեան արհաւիրքների դէմ, թէ մարդկային բռնութիւնների ու շահատակումների դէմ։

Դու, հայ մշակ, հայ աշխատաւոր, հայ արհեստաւոր, մի՞թէ քեզ չէ բաղդակցել «Մշակը», որ հէնց առաջին օրերից սկսած՝ քո աշխատանքն է նշանաբան ընտրել իր համար և քո կոչումով կնքել իր դրօշակը։ Մոռացութեան չէ տուել քեզ բնաւ և միշտ հնչեցրել է իր ձայնը քո դատի օգտին։

Դուք, աշխարհիս բոլոր ծայրերը սփռված՝ տարբեր բաղդի ու վիճակի ենթակայ հայ եղբայրներ, «Մշակը» չէ զլացել իր խաբրիկներով հայրենիքի իսկական պատկերը տալ ձեզ։

Հայրենիքից տարագրվածներին հաղորդել է մայրենի օջախին հաւատարիմ ու նրա փլատակների վերաշինութեան համար գերմարդկային ճիգեր թափող ուխտեալների՝ արիւնի գնով իր ապրուստը դատող, բայց միշտ զրկանքների, թալանների, ակումների և սովի ճիրաններում արտասուալի կեանք վայելող ժողովրդի անմխիթար դրութիւնը և օգնութեան կոչ արել։

Թիւրքահայ եղբայր, քեզ հետ միասին էր արտասվել «Մշակը» քո արիւնոտ դժնեայ օրերին։

Առել է քո բողոքն ու կսկծալի ճիչը ու աշխարհ սփռել։

Կազմակերպել է հանրային օգնութեան գործը քո վէրքերին շուտափոյթ սպեղանի դնելու նպատակով։

Քո հեծութեանց ու արդար դատի մունետիկն է հանդիսացել միշտ հզօր պետութիւնների առաջ։

Մրրիկի օրերում զատված կաթօլիկ ու բողոքական հայ եղբայրներ, այն ով էր, որ իր հրապարակական քարոզներով առաջինը հանդէս եկաւ համոզելու մեծամասնութեանը, թէ «կրօնը համոզմունք է միայն, փոխել զովելի չէ, բայց կարելի է։ Ազգութիւնը համոզմունք չէ. նա մի լոկ անուն չէ, շապիկ չէ, որ ամեն օր կարելի լինէր փոխել. ազգութիւնը ֆիզիօլոգիական գաղափար է», որ սխալ է ազգութիւն ասելով՝ հասկանալ կրօն ու եկեղեցի. որ կաթօլիկ հայն էլ, բողոքական հայն էլ, լուսաւորչական հայն էլ միևնոյն խղճուկ ազգի անբաժանելի, իրար բաղդակից, իրար հարազատ եղբայրներն են։

Կարող ես մոռանալ այդ համարձակ քարոզչին, որ մշակի համեստ դերն էր ստանձնել ազգային զանգուածի մէջ եղբայրական սէր և համերաշխութիւն սերմանելու գործում. որ տառապող ժողովրդի ցաւերը, նրա բաղդը, վերածնութիւնն ու ապագան դարձրել է միացնող օղակ, դարձրել է շաղկապող կամուրջ մրրկով զատված եղբայրների համար։

Դու, երիտասարդ սերունդ, որ քեզ հետ բերում ես հայ ժողովրդի բաղդը, որ քո մատաղ սրտի մէջ պարփակում ես ժողովրդական զգացմունքների թափը, իսկ դիւրաբորբոք գլխիդ մէջ՝ նրա մտաւոր եփը, նրա մէջ ամբարված կորովն ու կամքի ոյժը։

Զէ որ «Մշակը» յամառ աշխատանքի սէրն է ներշնչել քեզ, դէպի ուղիղ և խոհեմ գործունէութեան ուղին է մղել քեզ, անշահասիրութեան, շիտակութեան և անձնուիրութեան պատգամներն է տուել միշտ և կանգնեցրել քեզ խղճի պատասխանատուութեան առաջ։

«Կրթված մարդը մի բարոյական դատաւոր է ճանաչում միայն՝ իր խղճմտանքը»,— ասում էր Արծրունին՝ հասարակական մեռցնող ազդեցութեան դէմ բողոքելիս։

Պէտք է գնաս այդ ընդգծված ճանապարհով, որպէսզի մեր ցեղի գալոց սերունդը լինի դիմացկուն, կենսունակ, իր արատներից մաքրված ու վերածնված։

«Մշակը» 40 տարի ուղեկցել է քեզ քո առաջխաղացութեան ընթացքում, զգուշացրել է շեղումների ու սխալների ժամանակ, հորդորել ու սթափեցրել է, երբ հասարակաց գործը զոհաբերել ես քո անձնական վայելքներին, փոխարինել ես ժամանակաւոր թեթև յաջողակութիւններով, և միշտ էլ պահանջել է աշխատանք, աշխատանք ու աշխատանք։

«Աշխատանքի օրէնքը մեզ ազնուացնում է և բարձրացնում։ Առանց աշխատանք չը կայ ոչ գիտութիւն, ոչ արհեստ, ոչ հարստութիւն»։

Ահա թէ ինչու համար էր կրկնում «Մշակի» հիմնադիրը. «Էգուց մենք պէտք է աշխատաւորներ դառնանք»։

Աշխատանքի պահանջը մինչև օրս էլ չէ դադարում «Մշակի» էջերից։

Մինչև օրս էլ անհատական ու հասարակական պարտքի այդ գիտակցութիւնն է շարժում նա ձեր մէջ, հայ երիտասարդութիւն։

Մի՞թէ դուք պէտք է խորթ զգաք այդ տօնախմբութեան մէջ։

Թէ՛ դուք, հայ մայրեր ու քոյրեր, որոնց ազատ դաստիարակութեան, կրթութեան ու ազատագրութեան ջատագովը եղաւ իր էջերում և նրանց դատի եռանդուն պաշտպանը հայ իրականութեան մէջ։

Այն ով էր, որ հայ կնոջը ստրկացնող հայ մարդուն, այն հայ մարդուն, որ իր բարքով, վարքով ու հայեացքներով կրթված էր մահմեդական ոգով, առաջինը յորդոր կարդաց կնոջը ազատագրելու։

«Եւրոպան ուժի է հանում նրանց,— ասում էր Արծրունին։— Մեր յանցանքն է, եթէ կինը դառնում է մեզ օտար, դառնում է մեզ հակառակորդ»։

Եթէ այսօր դուք հանդէս էք գալիս գրական-հասարակական կեանքում, եթէ այսօր կրթական-դաստիարակչական ասպարէզում դուք սկսում էք ըստ արժանւոյն գրաւել ձեր կոչմանը համապատասխանող տեղը հայ կեանքում, մասամբ պարտական էք այն առաջադէմ հոսանքին, որի ղեկավար դրօշակն էր «Մշակը»։

Առանց պատկառանքի չէք կարող անցնել այդ դրօշակի մօտից, և առանց երախտագիտական զգացմունքի դիմաւորել այն տօնը, որ ձեր մասնակի ազատագրութեան տօնն է։

Ի՞նչ ասել հայ առևտրական դասին։

«Մշակը» շարունակ հարուածել է հայ վաճառականութեանը, դա ճիշդ է։ Սակայն արդիւնաբերութեան զարգացման և առևտրական դասի բարելաւման գործին ոչ ոք այնքան խոշոր զարկ չէ տուել, որքան «Մշակը»։

Երկրի տնտեսական զարգացումը՝ առաջադիմութեան գլխաւոր փակտօրն է։

Բնական է, որ «Մշակը» խոշոր սիւնակներ է նուիրել մեր հայրենիքի առևտուրին և արդիւնաբերութեանը։

Նա շարունակ առաջարկել է, որ հայը միայն խնայելով ու հաւաքելով չը զբաղվի. որ հայը գործադրի իր դրամագլուխը երկրի հարստութիւնների մշակման վրա, հում բերքերի արտահանութեան, երկրագործութեան, գինեգործութեան, անասնապահութեան վրա և այլն. բանայ գործարաններ՝ իւղահանութեան, կճքի, գործուածքների, մետաքսագործութեան. ըն[illegible] շրջանը, աւելացնի նրանց թիւը, փոխատու մանր վարկերով օգնութեան հասնի գիւղական ազգաբնակութեանը... Մի խօսքով՝ շահեցնի այդ դրամագլուխը, այլ ոչ դնի սնդուկում ու նստի վրան։

Միևնոյնն է։

«Ոչ մի հարստութիւն կովկասեան հայերի մէջ չի տևի մի սերունդից աւելի։ Կը հաւաքի, բայց չի գործադրի երկրագործական ձեռնարկութեան մէջ, կը հրաժարվի գործարաններ ու ընկերութիւններ հիմնել։ Հաւաքում է, բայց չի մտածում կրթել նոր սերունդը, որ շահեցնի հաւաքածը։ Դրա համար էլ ունենք հարուստ անհատներ, բայց չը կայ հարուստ հայ տարր։ Խնայող է չնչին հաշիւներում, բայց անհաշիւ ցրվող՝ քէֆի և շռայլ կեանք վայելելու մէջ»։

Մի՞թէ թշնամական խօսքեր են այդ բոլորը։

Բնաւ։ «Մշակը» վերածնութեան ու նոր կեանքի կոչ էր անում այդ խօսքերով։

Քարոզում էր կրթված սերունդ պատրաստել, դպրոցներ հիմնել և նրանց մէջ մտցնել մայրենի լեզուի հետ զուգընթացաբար օտար լեզուների դասաւանդումը։

Այդ ճանապարհով միայն տեղական վաճառականութիւնը կարող էր պահել իր տիրապետող դիրքը և չը դառնալ եւրոպացի վաճառականի գործակատարը, նրա ձեռքում գործիք, նրա շահերի ծառան։

Կապիտալի շահեցման ու կրթութեան մէջն էր տեսնում երկրի փրկութիւնը։

Դառնանք հասարակական միւս կուլտուրական գործօններին։ Ո՞ր մէկն ասեմ։

«Մշակի» հոգսերից առաջնակարգը եղել է մանուկ սերնդի կրթութիւնը, հայ դպրոցը իր ուսուցիչներով, մայրենի լեզուն, հայ գրականութիւնը, գեղարուեստը։

Դրանցից ոչ մէկը վտարված չէ եղել «Մշակի» 40-ամեայ էջերից։

Եթէ դուք էլ լաւ մտաք՝ կաղաղակեն փաստերը։

Փաստերը կասեն ձեզ, որ անգամ ազգային անձուկ շրջանակներ վերաբերեալ խնդիրներից զատ, «Մշակը» մեր մէջ սերմանել է նաև միջազգային գաղափարները, կոչ է արել դրացիական համերաշխութեան, աշխատել է հայ-վրացական լարված յարաբերութիւնները հարթել, հասկացնելով երկու հարևան ազգերի բարոյական կապերը, փոխադարձ օգնութեան, եղբայրսիրութեան, ընդհանուր շահերի օգուտը և ընդհանուր գործակցութեան անհրաժեշտութիւնը. պախարակել է ազգայնամոլութիւնը և շովինիստական գործելակերպը. մորակել է և անխնայ մորակել մանաւանդ հայ վաշխառուներին, որոնք հաւասարապէս հարստահարում էին գիւղական թէ հայ և թէ վրացի ազգաբնակութեանը։

Արծրունին ասում էր.

«Հայը զարմանում է, որ նրան չեն սիրում։ Բայց չէ մտածում, որ նա մինչև այժմ ոչինչ չէ արել, որ իրան սիրել տար»։

Միևնոյն խօսքերը իբրև նախազգուշութիւն կարելի է կրկնել և այսօր։

Աշխատիր սիրելի դարձնել քեզ,— ասել է ու ասում է «Մշակը» հայ ժողովրդին։

Իսկ դա հնարաւոր է կուլտուրական խաղաղ աշխատանքով, մտքի և հոգու բիւրեղացումով, իսկական առաջադիմութեամբ, այլ ոչ [illegible], բարոյապէս և տնտեսապէս հարստահարելով։

Իսկ դուք, որ յօբելեաններ էք տօնել արդէն։

Դուք, որ առաջին անգամ արտայայտվել էք «Մշակի» էջերում, որոնց առաջ է քաշել նա և յանձնարարել հայ ժողովրդին։

Ո՞ւր էք այսօր։

Ո՞ւմ ուսերի վրայից էք անցել ու բարձրացել դէպի յօբելեանական ամբիոնը։

Եւ այդ ամբիոնի վրա բազմած՝ մոռացել իրականութիւնը։

Պառնասի կատարին հանգստացէք անխռով։ Դուք երէկվայ շրջանն էք ընկելպեծ։

«Մշակի» համար այս օրն է կարևորը։

Հանրութեան «Մշակը» այսօր վառ ու անհեռատես նորերի ազգադաւ գործելակերպի առաջ դիմում է հայ հասարակութեանը։

Կեանքի է կոչում «Մշակի» դաւանանքներին հաւատարիմ գործողներին։

Աշխատակցութեան է հրաւիրում ձեզ, ժողովրդի համեստ ու անշահասէր մշակներ, շիտակ ու ողջամիտ զինակիցներ, որ հանրային բարեկեցութիւնը, որ չարքաշ ժողովրդի ապագան և շահը միշտ վեր էք դասել անհատական ու խմբակցական շահերից։

Ձեզ, որ նորագոյն կեանքի բազմաթիւ արահետների առաջ կարողացել էք ձեր հոգու արիութիւնը, ձեր մտքի առողջ դատողութիւնը և ձեր սրտի մաքրութիւնը պահպանել, հեռու մնալ նախապաշարումներից և ազատ մնալ վատ ներշնչումներից։

Այդպիսիներին է դիմում այսօր «Մշակը»։

Այդպիսիների աշխատակցութեամբ է սպասում նա կուլտուրական համեստ, թէև մի փոքր դանդաղ, բայց ճգնաժամերից ազատ հանրօգուտ գործունէութեան համար։

Թող այդ բեղմնաւոր աշխատանքը համախմբէ նորից մեզ «Մշակի» շուրջը։

Խօսքից գործի անցնենք, ազգօգուտ գործի։

Եւ կործանարար խանգարումի տեղ դիմենք համերաշխ աշխատակցութեան։

Աշխատակից

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

X

Ամեն անգամ, երբ ձեռքս եմ առնում կարդալու որևէ լրագիր, իմ սիրտս ճնշվում է մի սոսկալի, զօրեղ ցաւից, երբ աչքովս են ընկնում յօդուածներ ու տեղեկութիւններ սովի մասին։

Ամբողջ լայնածաւալ Ռուսաստանի մի անգին մասը գտնվում է ներկայումս այդ սոսկալի համաճարակի ճանկերում։ Լրագիրները ամեն օր մէկը միւսից սոսկալի, մէկը միւսից ցնցող տեղեկութիւններ են հաղորդում սովի ճանկերում գտնվող վայրերից։

Սո՜վ...

Մի խօսք է այդ, երեք տառից բաղկացած մի հասարակ բառ, և, սակայն գիտէ՞ք, ընթերցող, թէ ինչ սոսկում է առաջ բերում այդ հասարակ բառը մարդու վրա։

Սո՜վ...

Այդ նշանակում է, որ տասնեակ, հարիւր հազարաւոր, նոյնիսկ միլիօնաւոր մարդիկ զրկված են կեանքի ամենաանհրաժեշտ փակտօրներից մէկից՝ հացից։ Այդ նշանակում է, որ ամեն տեսակ զրկանքների ու նեղութիւնների սովորած մարդը, որը միայն ցամաք հացով է պահում իր գոյութիւնը, այսօր այդ հնարաւորութիւնից էլ է զրկված և գալարվում է սովի ճանկերում, ինչպէս մացու կենդանին մսագործի դանակի հարուածների տակ։

«На бѣднаго Макара всѣ шишки валятся»— ասում է ռուսական առածը, և որքան ճիշդ ու հոգեբանական արտայայտութիւն է տալիս նա։

Այդպէս է կեանքը։

Ամեն մի ցաւ, ամեն մի դժբաղդութիւն երկրագնդի վրա միշտ այդ խեղճ Մակարի, խեղճ ու աղքատ մարդու գլխին է իջնում։

Եւ դժբաղդաբար՝ մարդկութեան 99 տոկոսն էլ հէնց այդ Մակարներից է բաղկացած։

Մարդկութեան ամենամեծ տոկոսը պարիաների մի հսկայ խումբ է, որը իր ամբողջ կեանքի ընթացքում մի կտոր ցամաք հացի համար տանջվում, ոսկոր է փտեցնում։

Սո՜վ է...

Միլիօնաւոր մարդիկ գալարվում են նրա ճանկերում, մեռնում են քաղցից, նոյնիսկ իրանց երեխաներին ու կանանց ծախում մի կտոր չոր հացի համար։

Հարուստը հարիւրներ ու հազարներ է ծախսում, թանգագին շորեր ու զարդեր ձեռք բերում, որպէսզի նրանցով փայլէ ուրիշների առաջ սովեալների օգտին տրվող երեկոյթներում ու պարահանդէսներում։

Նա պարում է, զուարճանում «սովեալների օգտին»։

Եւ նա «իրաւունք» ունի։

Ո՞վ կարող է մեղադրել նրան, որ նա չէ օգնում իր թշուառ եղբօրը։

Ի հարկէ ոչ ոք. նա իր պարտքն է կատարում։

Այդպէս է միշտ։

«Կուշտը քաղցածին մանր կը բրդէ»։

Վ. Թումանեան

ՕԳՆԵՆՔ

«Մշակի» № 4-ում կարդացի հետևեալ տողերը «Ներքին լուրերի» բաժնում.

«Բարձրագոյն դպրոցի մի ուսանողուհի, որը անհրաժեշտ կարիք ունի մի 100 րուբլու՝ ուսումնավարձ մտցնելու մինչև յունվարի 15-ը, խնդրում է բարեգործ անձանց իրան օգնութեան ձեռք մեկնել։

Անցաւ մի երկու օր ևս, և ոչ մի նուէր չը ստացվեց։

Եւ այն համակրելի հայ ուսանողուհին, որը միջնորդում էր յիշեալ ուսանողուհու համար, ձեռնունայն վերադարձաւ, յայտնելով որ յունվարի 15-ից յետոյ չքաւոր ուսանողուհին յուսաբեկ սրտով էքսկուրսիայի հետ մեկնեց արդէն, աւելացնելով որ եթէ մինչև յունվարի 25-ը անհրաժեշտ գումարը ստացվի, դեռ կարելի է մի կերպ կարգադրել, որ չքաւոր ուսանողուհին ընդունվի դասընթացքներում։

Իւրաքանչիւրը մեզանից կարդալով այս տողերը թերևս մտածէ, որ կը գտնվեն մարդիկ, որոնք կօգնեն նեղն ընկած, գուցէ և արդէն յուսահատված ուսանողուհուն, բայց դառն իրականութիւնը այն է ասում, որ ցարդ չէ ստացվել այդ նպատակով և ոչ իսկ մի կոպէկ, և խեղճ հայ ուսանողուհին ծովի ափին նստած փոթորկի դադարման է սպասում, որպէս զի առաջ նաւարկէ։

Իսկ մենք մի բոպէ պատկերացնելով մեր աչքի առաջ ուսման վճարը չը մտցնելու պատճառով բարձրագոյն դասընթացքներից դուրս մնացած ուսանողուհու հոգեկան աշխարհի ապրումները և ի մօտոյ ծանօթ լինելով չքաւոր ուսանող-ուսանողուհիների կեանքին, մանաւորապէս վերոյիշեալ նման կացութեան ժամանակ, յորդոր ենք կարդում այն բոլորին, որոնց սիրտը ընդունակ է իր նմանին նեղ և յուսահատ դրութիւնից դուրս բերելու գաղափարը հասկանալու, օգնութեան ձեռք մեկնել չքաւոր հայ ուսանողուհուն որչափ կարելի է շուտ։

Նախկին ուսանող

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մ. Մ. Սափարով-Աբաշիձէի յօբելեանական մասնաժողովը հետևեալ ծրագիրն է որոշել. Կիրակի, յունվարի 23-ին, ցերեկվայ ժամը 12-ին, տեղի կունենայ յօբելեարուհուն ուղղված շնորհաւորանքը։ Մէջ ընդ մէջ երաժշտախումբը կը նուագէ զանազան եղանակներ։ Վերջում կը խօսէ ինքը յօբելեարուհին։ Ցերեկվայ հանդէսը կը բանայ բանաստեղծ Ակակի Ծերեթելին։ Երեկոյեան տեղի կունենայ յօբելեանական ներկայացում, իսկ ապա վրաց դրամ. խմբի շնորհաւորանքը։

◆ Վրաց դերասանուհի Սափարով-Աբաշիձէի բեմական գործունէութեան 30-ամեայ յօբելեանի առիթով Հայոց Դրամատիկական Ընկերութեան վարչութեան կողմից շնորհաւորելու են մի ուղերձով և պսակով վարչութեան անդամները՝ փոխնախագահուհի տ. Վ. Մամուլեան և պ. Ք. Տէր-Սարգսեան։

◆ Թիֆլիսի նահանգապետը քաղաքային վարչութեան ուշադրութիւնն է հրաւիրում Կուր գետի Մաղաթեան կղզու աջ կողմն ընկած ճիւղի հակառողջապահական վիճակի վրա. յայտնի է, որ այդ ճիւղի ջուրը ձմեռը և ամառը քչանալով, սոսկալի գարշահոտութիւն է առաջանում և վարակում է օդը։ Քաղաքային վարչութիւնը այս առիթով մօտ օրերս քաղաքային գործիչների և մասնախմբերի խորհրդակցութիւն է հրաւիրում։

◆ Քաղաքային վարչութեան անդամ իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը քաղաքային վարչութեանը ներկայացրել է մի ընդարձակ զեկուցում՝ Թիֆլիսին ջուր մատակարարելու մասին։

◆ Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան մէջ տեղի կունենան հետևեալ ժողովրդական դասախօսութիւնները. այսօր ժամը 4—5 տ. Բէժանօվան ռուսերէն՝ երեխաների համար «Պրինցը և աղքատը»։ Վաղը, կիրակի, ժամը $9^{1}/_{2}$—11 ու 11—12 նոյնպէս երեխաների համար կը լինեն զրոյցներ հայերէն ու վրացերէն։ Հասակաւորների համար բժ. Ֆլօրինան կը շարունակէ խօսել մարդու կազմուածքի մասին։ Մուտքը բոլորի համար ձրի է։

◆ Այսօր, շաբաթ, ժամը 8-ին երեկոյեան, Թիֆլիսի Հասարակական կլուբում (Բօրսայի դահլիճ) Ա. Ֆոմինը կը կարդայ ռեֆերատ «Ալբիական բուսականութեան մասին». վերջում տեղի կունենայ անդամների ընդհանուր ժողովը՝ քննելու անցեալ տարվայ հաշիւները։

◆ Քաղաքային վարչութիւնը նահանգապետին է ներկայացրել ի հաստատութիւն վերընտրված քաղաքագլուխ Ա. Խատիսեանի ընտրութեան գործը։

◆ Մսի սակագինը Թիֆլիսում բարձրացված է. Ոչխարի միսը փոխանակ 14 կոպէկի կը ծախվի 15-ով, իսկ տաւարինը 12-ի փոխարէն 13 կոպէկով։

◆ Թիֆլիսի մեղուապահական ընկերութիւնը որոշել է ունենալ մեղուապահական իրերի պահեստ Թիֆլիսի շերամապահական կայարանին կից։

◆ Մեզ խնդրում են տպել, որ տ. Ազնիւ Մախոխեանը, իր հանգուցեալ մօր՝ Սոֆիա Քրիստոստուրեանի յիշատակի համար ուղարկել է Զգրաշէնի եկեղ. հոգաբարձութեանը յօգուտ դպրոցի՝ 35 րուբլի։

◆ Մեզ հաղորդում են Էջմիածնից, որ այնտեղ տիֆից վախճանվել է ճեմարանի սան Ա. Թումանեան։ Սա արդէն երկրորդ դէպքն է, ինչ նոյն հիւանդութիւնը զոհեր է տանում։

◆ Վրաց Դրամատիկական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, վարչութեան որոշմամբ, կը հրաւիրվի յունվարի 25-ին։ Ի միջի այլ հարցերի, ժողովի քննութեանը կառաջարկվի ձմերային սեզօնը շարունակել նաև գարնանը։

◆ Բագւում մեծ հանդէսով թաղվել է նորերս մարդասպանի ձեռքով ընկած մօլլա Հաջի Ռուհուլլահ Ախունդօվը, որ իր լուսամիտ գաղափարներով ահագին ժողովրդականութիւն էր վայելում մահմեդականների մէջ։ Հանգուցեալի բեղմնաւոր գործունէութեան մասին խօսվել են մի քանի դամբանականներ։ Թաղմանը ներկայ են եղել բազմաթիւ օտարազգի ներկայացուցիչներ։

◆ Բագւի նաւահանգստի հրամանատար փոխ-ծովակալ Ալեքսէևի հրաժարականը ընդունվեց։

◆ Բագւի Հասարակական ակումբը որոշել է իւրաքանչիւր տարի իր միջոցներից 10,000 ր. յատկացնել կովկասեան համալսարանի ֆոնդի միջոցները շատացնելու համար։

◆ Այս օրերս Բագւում քննվեց ոստիկանապետի նախկին օգնական Րժշևսկու գործը, որը մեղադրվում է կաշառակերութեան մէջ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Տան թատրոնում

Հայ դերասանական խումբը յունվարի 18-ին ներկայացրեց Գորդինի 4 գործ. «Ովկիանոսի միւս կողմը» դրաման *)։

Ինչպէս «Միրրա Եֆրոսի» մէջ, այնպէս և այստեղ Գորդինը հրէական հին սերունդը հակադրում է նորին։ Գորդինը ինքը լինելով հին սերնդի ներկայացուցիչ, նրա ամբողջ համակրանքը առաջնի կողմն է։ Նրա դրամաներում հինը հանդիսանում է մի տարր, որ օժտված է մարդկային բա[illegible]քով, խելքով, հեռատեսութեամբ, մինչդեռ նոր սերունդը՝ անբարոյական է, մեղկ, մանր ու գծուծ։

Կալուածատէր Իսահակ Ֆրիդենտալի (Աբէլեան) աղջիկ Եսֆիրը (Մայսուրեան) յղանում է, մի քրիստոնեայ երիտասարդի հետ սիրային կապեր ունենալով։ Նա լուրջ ու խելօք է, բայց կամազուրկ։ Փոխադարձ սէրը աջողութեամբ չէ պսակվում, որովհետև հրէական կրօնական դաւանանքը դա սրբապղծութիւն կը համարի։ Արգելքները ընկճում են երիտասարդին և նա վերջ է տալիս իր կեանքին։ Մնում է Եսֆիրը՝ «խայտառակութեան կնիքը» ճակատին։ Նա յղի է։ Խստաբարոյ հօրը յայտնի է ողբերգական գաղտնիքը։ Եւ նա ուզում է ազատել իր և աղջկայ պատիւը հասարակական նախատինքից։

Նա ամուսնացնում է նրան մի երիտասարդ երաժշտի՝ Միխայիլ Մուխի (Շահխաթունի) հետ, որի մէջ գեղասիրական ճաշակը շատ սերտ կապված է եղել արծաթասիրական ձգտումների հետ... Սա գրաւվում է ոչ թէ աղջկայ բարեմասնութիւններով, այլ հնչիւն արծաթով—օժիտով։ Ֆրիդենտալը, սակայն, մի պայման է դնում, որ նորապսակ զոյգը անմիջապէս պէտք է մեկնի Ամերիկա։ Այդպէս էլ լինում է։ Ծերունի Ֆրիդենտալը՝ անկարող լինելով ապրել առանց իր Եսֆիրի՝ ինքն էլ ամբողջ ընտանիքով տեղափոխվում է Ամերիկա, դառնալով ֆերմեր։ Այստեղ պատկերը փոխվում է։ Եսֆիրի զաւակը 8-ամեայ մանուկ է արդէն, զատված իր խորթ հօրից։ Միխայիլը սկսում է գրաւվել Եսֆիրի քոյր Ցիվայով, որի հետ կապվում է ինտիմ կապերով՝ ունենալով մի երեխայ նրանից։ Եսֆիրը ամեն ինչի ականատես՝ լռում ու համբերում է։ Սակայն ի վերջոյ արհամարհված, ծաղրված՝ պայթում է մի փոթորիկ, ալեկոծում Եսֆիրի սիրտը, և սա իր հոգեկան հաւասարակշռութիւնը կորցրած՝ ատրճանակի երկու հարուածով վերջ է տալիս շուայտ Միխայիլի և չարաբարոյ Ցիվայի (տ. Գուլազեան) կեանքին։

Ըստ Գորդինի՝ «բարութիւնն ու ճշմարտութիւնը» միշտ յաղթող են հանդիսանում, չարութիւնը, վատութիւնը պատժվում է, լաւութիւնը թագաւորում։ Եթէ խորապէս քննելու լինենք հոգեկան այն վերապրումները, որոնք յատուկ էին Ֆրիդենտալ ծերունուն, կը տեսնենք թէ որքան հոգեբանական համանման գծեր կան սրա և Միրրա Եֆրոսի միջև։

---

*) «Ովկիանոսից դուրս» թարգմանել չէ կարելի „за океаномъ“ դարձուածքը. «Ովկիանոսից դուրս» նշանակում է „внѣ океана“, որ կարող է ովկիանոսի և այս և այն կողմը լինել։

Գօրգինը պահպանողական տիպի գրող է. ապագան նա չէ նշմարում նոր սերնդի մէջ. վերջինս մանրացած տարր է հին սերնդի դրական խոշոր գծերի համեմատութեամբ։

Աբէլեան սկզբից մինչև վերջ ամբողջացրած տարաւ Իսահակ Ֆրիդէնտալի դերը. Նրա տաղանդը նման դերերում միշտ էր համապատասխան բարձրութեան վրա է կանգնած։ Գեղեցիկ էր Մայսուրեան՝ համբերող, բայց թուլամորթ Էսֆիրի դերում։ Տանջանքների բոլոր արտայայտութիւնները, վշտի, յուսահատութեան դառն վայրկեանները նա ընդգծում էր ամենայն հարազատութեամբ։

Այդ օր առաջին անգամ մենք տեսանք Շահխաթունուն՝ առանձնած դերի ամփոփ կատարողութեան մէջ. ակնյայտնի էր, որ նա ուսումնասիրել էր Միխայիլ Մուխի տիպական ընդհանուր գծերը և խաղում էր մտածելով։ Դերասանական շնորհք անպայման կայ այդ երիտասարդի մէջ, սակայն մեզ թւում է, թէ նա անհրաժեշտ աշխատանքը չէ գործ դնում հարկաւոր պարագայում։

Տիպական էին անշուշտ Աւետեան ու Զարէլ իրանց դերերում, մանաւանդ առաջինը, եթէ ձևերի միանմանութիւնը բոլոր դերերում՝ միապաղաղութիւն չը համարենք։

Շատ բնական ու ամփոփ էին Ալիխանեան II և Խանզադեան՝ առաջինը Սամուէլի և երկրորդը՝ մանուկ Հէնրիխի դերերում։ Երկուսի մէջ էլ նկատվում է աստիճանական առաջադիմութիւն, այն էլ ոչ դանդաղաշարժ։

Միանգամայն անհամապատասխան էր տ. Մարգարիտ Խանայի դերում. այն չափազանցութիւնները ձևերի մէջ, այն ինտօնացիան՝ խօսելու, որ տիկինը գործ էր ածում Խանայի դերում, միանգամայն արհեստական ու անբնական էին։ Տիկինը տեղ-տեղ նոյնիսկ մինուս էր հանդիսանում ընդհանուր անսամբլի պահպանման տեսակէտից։ Լաւ տարաւ Անաստասիայի դերը տ. Ցասմիկ, իսկ Ցիվայի՝ տ. Գուլազեան։

Ժողովուրդը լցված էր թատրոնում։

Շատերը յետ էին գնացել տոմսակ չը լինելու պատճառով։ Սուր.

Արտիստական թատրոնում

Թիֆլիսի օպերէտային խմբի առաջնակարգ դերասանուհի Լէնսկայա-Կլավդինա իր բենեֆիսի օրը, հինգշաբթի, յունվարի 19-ին, հանդէս եկաւ «Օրիորդ Կրեվետ» օպերէտում։

Այդ օրը փայլեց նա իր բոլոր ձիրքերով։ Երգում էր, խաղում էր, պարում էր։ Նրա ձայնը ընդարձակ, ուժեղ, տպաւորիչ ձայն չէ, բայց դերասանուհին գիտէ ճաշակով երգել և գունաւոր տեղերը ընդգծել որոշ տրամադրութիւն առաջ բերելու համար. Նա խաղում է աւելի քան ազատ, հանդիսանալով տէր բեմի վրա, կենտրոնացնելով իր վրա հանդիսականի ուշադրութիւնը։ Նա պարում է հմուտ և վարժ շարժուածքներով։ Նա ստացաւ շատ ծաղկեփնջեր և ուրիշ նուէրներ։

Աչքի էին ընկնում Ռաֆալսկին, Բարատովը, Մըշեցկայան և առհասարակ անսամբլը։

Ինքը օպերէտը գործում է աւելի ֆարսի տպաւորութիւն, քան երգասացութեան։

Հասարակութիւն հաւաքվել էր մեծ բազմութեամբ. բռնված էին բոլոր տեղերը։ Սիրող

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ախալցխա, 10 յունվարի

Ախալցխայի Հայ Կանանց Բարեգ. Ընկ. ամսիս 8-ին տուեց իր սովորական երեկոյթը։ Այդ առիթով դերասան Ց. Օհանեանը տեղական սիրողների աջակցութեամբ խաղաց Գուցկովի «Ուրիէլ Ակոստան», որը կարելի է աջողված համարել ընդհանուր առմամբ։

Օհանեանի խաղը բնական էր իր հանդարտ և չը չափազանցացրած արտայայտութիւններով. մանաւանդ նկատվում էր նրա պարզ և մաքուր առոգանութիւնը, որը տալիս էր գրաւչութիւն իր խաղին։

Սիրողների մէջ առանձնապէս աչքի էր ընկնում օր. Սրաբեան, որ վերցրել էր Ցուդիթի դերը։ Օրիորդը կարող է շնորհալի կերպով կատարել այնպիսի դերեր, որոնք պահանջում են բեմական ձիրք. Նա թէև դեռ ունի աչքի ընկնող պակասութիւններ, բայց յամառ ու յարատև աշխատանքի շնորհիւ կարող են ուղղվել դրանք։

Շատ աջող էին նաև Միհրանը դը Սանտոսի դերում և Օհանեան II-ը՝ Բէն Ցակէբի դերերում։ Վերջինը մանաւանդ մեծ հաճոյք պատճառեց իր մտածված խաղով։ Գ. Ս.

—

Նովորոսիյսկ, 3 յունվարի

Ամսիս 1-ին տեղիս ծխ. երկսեռ դպրոցում կայացաւ տօնածառ՝ աշ.-աշակերտուհիների համար։

Ժողովվել էին աշակերտների ծնողները և կողմնակի անձինք։

Նախ քան հանդէսը բացվելը՝ Մ. Քենդիկեանը մի քանի խօսքով բացատրեց ուսումնարանի և ուսուցչի նշանակութիւնը, բացատրելով թէ առհասարակ [illegible] ժողովուրդը ի՛նչպէս բարձր է գնահատում դպրոցը և ուսուցչին։

Դրանից յետոյ ուսուցիչ Թորոսեանի ղեկավարութեամբ աշակերտներից կազմված երկձայն խումբը երգեց «Սարերի հովին մեռնեմ»։ Աշակերտները հերթով արտասանում էին ոտանաւորներ և խումբը մերթ ընդ մերթ երգում էր։

Աշակերտներին բաժանվեց միրգ, քաղցրեղէն և հագուստ, որը նուիրել էին տեղիս հայ վաճառականները։

Հանդիսականները շնորհակալութիւն յայտնելով հոգաբարձութեանը և ուսուցչին, ուրախ և գոհ սրտով հեռացան ուսումնարանից։ Հմ. Մակարեան

—

Պեատիգորսկ, 3 յունվարի

Այս տարի ուսուցչ. խումբը ցանկութիւն ունենալով ո՛չ միայն աշ.-աշակերտուհիների, այլև տեղիս բոլոր հայ երեխաների համար պատրաստել տօնածառ, իր դեկտ. 11-ին հրաւիրած ծնողական ժողովի օրակարգի մէջ մտցրեց և այդ խնդիրը։

Ժողովը խմբին աջակից ընտրեց տ. Եղ. Խաչիկեանին, Մ. Գիւրջեանին և Խ. Տէր-Ցարութիւնեանին, որոնք ուսուցչ. խմբի հետ կազմեցին տօնածառ կազմակերպող յանձնախումբ։

Դեկտ. 31-ին երեկ. ժամը $6\frac{1}{2}$-ից սկսվեց տօնական զւարճութիւնը։ Ծառը ծանրաբեռնված էր ընծաներով, որոնք մի-մի տոպրակ մրգերի հետ բաժանվեցին շուրջ 200 երեխայի։ Թէ գր.-երաժշտական բաժինը և թէ պարերը անցան օրինակելի կարգապահութեամբ և գեղեցիկ։ Երեխաները հեռացան ժամը $10\frac{1}{2}$-ին, իսկ մեծերը ժամը մօտ 2-ին։ Համարեա ամբողջ գաղութը ներկայ էր, որը քաղցր տպաւորութեամբ հեռացաւ ամենքին այնքան հարազատ և սրտին մօտիկ քաղցր օջախից։ Տօնածառի համար նուիրատուութիւններից գոյացաւ 114 ր. 40 կ., բուֆէտից՝ 19 ր. 98 կ., ընդամենը 134 ր. 38 կ.։ Ծախք եղել է 78 ր. 69 կ.։ Մնում է 55 ր. 62 կ., որը յատկացվում է աշակերտական նախաճաշին։ Մ. Մարգ.

ՄԱՄՈՒԼ

Գաղափարների, մտքերի շփոթութիւնը այնքան լայն ծաւալ է գտել հայերի մէջ, որ մարդ շուարած մնում է և չէ կարողանում իմանալ, թէ որտեղ է սկսում ազատականութիւնը, որտեղ վերջանում թունդ պահպանողականութիւնը։

Վերջերս Կ. Պօլսում սկսել է հրատարակվել «Լուսարձակ» անունով մի ամենօրեայ թերթ, որ իրան կոչում է «ընդդիմադիր օրգան» և համարում է «ազատական»։ Եւ [illegible] յօդուածներ, որոնք «ընդդիմադրութեան» կամ «ազատականութեան» հետ շատ քիչ առնչութիւն ունեն։

«Այսօր,—գրում է թերթը դեկտ. 17-ին,—Հայ առաքելական Եկեղեցին կը տօնէ սխրալի յիշատակը Ցակոբ Մծբնայ հայրապետին, Մարուգէ ճգնաւորին և Մելիտոս եպիսկոպոսին, որոնց կենսագրութիւնը կուզենք ծանօթացնել համառօտ կերպով»։

Եւ ամենայն լրջութեամբ թերթը տալիս է այդ ճգնաւորների կենսագրութիւնը, և այդ այն ժամանակ, երբ Հայաստանում կատարվում են հազար ու մի տեսակ հարստահարութիւններ, որոնց լուսաբանութիւնը աւելի օգտակար կը լինէր, քան ճգնաւորների կենսագրութիւնը։

Ահա և մի երկրորդ օրինակ։ Ռուսահայերս, վերջին երկու կաթողիկոսական ընտրութիւնից ծանօթացանք, որ Կ. Պօլսում մի որոշ կուսակցութիւն ունի մի նշանաւոր լիդեր, պարագլուխ (մենք այս ասում ենք, քանի որ ինքն Միհրդատ Հայկազն բարձրաձայն յայտարարում էր ամեն տեղ և Կ. Պօլսի հայ թերթերն էլ շարունակ յայտնում են այդ)։ Արդ, պէտք է ենթադրել, որ ամեն մէկը այդ խմբից գոնէ կղերական չէ, կամ, գոնէ կեղծում է, որ կղերական չէ։ Էլ չենք խօսում այն մասին, որ կարծում են՝ թէ այդ կուսակցականները չեն ճանաչում եկեղեցու, կրօնի նշանակութիւնը և սաստիկ թշնամի են տիրացութեան, հոգևորականութեան, կղերականութեան։ Արդ, ինչ ենք տեսնում իրականութեան մէջ։ Միհրդատ Հայկազն թէ Կ. Պօլսում և թէ մեզ մօտ շարունակ յայտարարում էր, թէ «կաթօլիկ եկեղեցու մէջ եղած մարդը չէ կարող կաթողիկոս լինել», և դրանով բացատրում էր, թէ ինչու ինքն ընդդէմ է Օրմանեանին։ Այժմ էլ «Ժամանակ» թերթի մէջ կարդում ենք Եր. Տէր-Անդրէասեանի մանրամասն նկարագրութիւնը և հիացումը, թէ Միհրդատ էֆէնդին տիրացութիւն է արել և կատարել է տիրացուի պաշտօն մի լուրջ մարդու ամբողջ գիտակցութեամբ։ Թիւրքահայ պատգամաւորները գնացել են Անի և կամեցել են, որ այդտեղի եկեղեցում պատարագ մատուցվի։ Մի պատգամաւոր քահանայ յայտնում է իր յօժարութիւնը պատարագել, բայց ով դժբաղդութիւն, տիրացու չը կայ, և մեծն Միհրդատ Հայկազն ջերմեռանդութեամբ պատրաստակամութիւն է յայտնում լինել տիրացու, և այդ պաշտօնը կատարում է ստանալով հոգեպարար գոհացում։

Խօսքերն աւելորդ են...

Եւ այսպիսի մարդիկ են, որ Օրմանեանին մեղադրում են, թէ նա կղերական է...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 7 յունվարի

Վաստակաւորի «Պատրանք» պիէսի ներկայացման առիթով «Մշակ» և «Тифлисскій Листокъ» լրագիրները յարձակողական յօդուածներ տպեցին Հայոց Դրամատ. Ընկ. հասցէին, պնդելով, որ վարչութիւնը բեմ է հանել պասկվիլ պարունակող մի պիէս։

Այդ յարձակումներին իբր հիմք ծառայել է այն, որ Պալենց ազգանունով խմբագրի դեր կատարող դերասան Աւետեանի գրիմը այդ լրագիրների ռեցենզենտների ու նրանց ծանօթներից ոմանց նման է թւացել Թիֆլիսի հայ խմբագիրներից մէկի կերպարանքին։

Այն հանգամանքը, որ նոյնիսկ ռեցենզենտները նմանութիւնը տեսել են միայն դերասանի գրիմում, պէտք է անշուշտ հարց զարթեցնէր նրանց մէջ, թէ արդեօք հեղինակն է պատճառը այդ նմանութեան թէ դերասանը, որովհետև երբ մի հեղինակ ուզում է պասկվիլ գրել մէկի մասին, աշխատում է նրան յիշեցնել իր հերոսի ոչ միայն արտաքինով, այլ և ուրիշ առանձնայատկութիւններով, օրինակ՝ հերոսի բերանը դնելով այնպիսի խօսքեր ու դարձուածքներ, որոնք յատուկ են պասկվիլի զոհին։ Այդ այդպէս պիտի լինէր մանաւանդ այս դէպքում, երբ իբր թէ պասկվիլային նպատակով բեմ էր հանվում մի խմբագիր։ Ի՞նչ կար աւելի ճիշդ, քան այդ խմբագրին արտասանել տալ մի քանի ֆրազներ պասկվիլի ենթադրեալ զոհի յօդուածներից։

Դժբաղդաբար յիշեալ ռեցենզենտները այդ տարրական զգուշութիւնը չեն ունեցել և թեթև սրտով իրանց թոյլ են տուել Հայոց Դրամատ. Ընկ. վարչութեան վրա բարդել մի վերին աստիճանի ծանր մեղադրանք, պնդելով թէ վարչութիւնը բեմ է հանել պասկվիլ պարունակող մի պիէս։

Եթէ Հայոց Դրամատ. Ընկ. վարչութիւնը մինչև այժմ անպատասխան է թողել այդ յարձակումները, դրա պատճառը հետևեալն է.

Նախ, ինչ վերաբերում է պիէսին, ռեցենզենտների համար պարզվեց իրանց սխալը այն րոպէից, երբ «Մշակում» տպած Աւետեանի նամակում նրանք կարդացին այն ցուցմունքները, որ հեղինակը տուել է Պալենց խմբագրի արտաքինի մասին, և վարչութիւնը ամենայն իրաւամբ սպասում էր, որ իրանք ռեցենզենտները կը շտապեն հրապարակով խոստովանել, որ իրանց յարձակումները հեղինակի և վարչութեան հասցէին թիւրիմացութեան արդիւնք են եղել (այդ անհրաժեշտ էր մանաւանդ այն պատճառով, որ ընթերցողներին յայտնի չէ, թէ ո՛ր խմբագրին ի նկատի ունէին ռեցենզենտները, և ուրեմն իրանք ռեցենզենտները պէտք է յայտնէին, որ հեղինակի ցուցմունքները ամենևին չեն համապատասխանում իրանց ի նկատի ունեցած խմբագրի արտաքինին)։

Երկրորդ, վարչութիւնը իրան պարտա- [illegible] տալ այն հայ խմբագրին, որին ի նկատի ունէին ռեցենզենտները, եթէ յիրաւի դերասան Աւետեանը մեղաւոր էր նրա նկատմամբ։

Մանրամասն քննելով այս վերջին հարցը, վարչութիւնը եկաւ հետևեալ եզրակացութեան.

Եթէ դերասան Աւետեանը Պալենց խմբագրի դերը խաղալիս բառացի հետևէր Վաստակաւորի ցուցմունքներին, իր դէմքով ոչ մի նմանութիւն չէր ունենայ այն խմբագրին, որին ի նկատի ունեն «Մշակի» և «Т. Л.»-ի քննադատները։ Այն շեղումները, որ թոյլ է տուել իրան Աւետեանը հեղինակի ցուցմունքներից, տեղիք են տուել հանդիսականներից ոմանց նմանութիւն տեսնելու Պալենցի և Թիֆլիսի հայ խմբագիրներից մէկի մէջ։ Դերասան Աւետեան, որ իր բազմամեայ գործունէութեան ընթացքում յայտնի է եղել միշտ իբր բարեխիղճ անձնաւորութիւն, պնդում է, որ այդ շեղումները տեղի են ունեցել առանց չար դիտաւորութեան (պէնս-նէ չէ դրել, որովհետև շպարված քթի վրա չէր բռնվում. մազերը սեխսանի տեղ ալեզարդ են եղել և կարճ խուզված փոխարէն ճաղատ, որովհետև ձեռքի տակ ունեցած պարիկներից միայն վերջինն է իր գլխին յարմար եկել, և այլն)։

Վարչութիւնը հիմք չունի չը հաւատալու դերասան Աւետեանին, ուստի և կարող է միմիայն իր անկեղծ ցաւը յայտնել տեղի ունեցած թիւրիմացութեան համար։

Հայոց Դրամատ. Ընկ. Վարչութիւն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

19 յունվարի

ԲԵՐԳԷՆ։ Սկէլանգէնի մօտերը «Լչին» նաւի խորտակման ժամանակ խեղդվեցին 11 մարդ։

ՏՕԿԻՕ։ Տօբիօյի չուգունի ձուլելու գործարանում ուժանակի պայթումից սպանվեցին 6, վիրաւորվեցին 8 մարդ։

ԳԱՄԲՈՐԳ։ Մի նաւակի խորտակվելուց խեղդվեցին 8 մարդ։

ԲԵԼԳՐԱԴ։ Գահաժառանգը մեկնեց Սօֆիա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական Խորհրդի մասնաժողովը դումայական խմբագրութեամբ ընդունեց բարձր տարրական դպրոցների կանոնադրութեան նախագծի առաջին 17 յօդուածները աննշան փոփոխութիւններով։

Նահանգական դատարանը դատապարտեց «Совр. Слово»-ի խմբագիր Պրօշէցովին երկու ամսով բանտարկութեան «Подпольный націонализмъ» յօդուածի համար։

Ընտրվեց Պետ. Խորհրդի կենտրոնի խմբակի նոր բիւրօ.—Ալգակով, Բալաշով, Երմոլով, Իլին, Ֆոն-Կաուֆման, Մանուխին, Օլիգար, Տագանցէվ, բարոն Տիզէնհաուզէն, Տրուբնիկով, Շերէկօ, Շմէման։ Թեկնածուներ ընտրվել են Զինովիէվ 3, բարոն Դէլինգսհաուզէն, Սկիրմունտ, Խանէնկօ։ Միաձայն շնորհակալութիւն յայտնվեց նախկին բիւրոյի կազմին։

ՀԱԱԳԱ։ Ստորին պալատն ընդունեց զինուորական օրինագիծը, որի համաձայն զօրքերի թիւը մեծացված է, բայց ծառայութեան ժամանակամիջոցը որոշված է $8\frac{1}{2}$ ամիս։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Высочайше Утвержденное Русское Обществ.
Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ձմերային երթևեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից

I Պօստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով.
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի »
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւեր.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »

Ժամերը Պետերբուրգի են։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՕՍՏԱՅԻՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, Բոլգարիայի, Մակեդոնիայի, Սերբիայի, Անատոլիայի-Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։

ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Ռիգա, Լիբավա և Րէվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում, Վելիամինովսկայա փողոց, № 18.
Հեռախօս № 11.
Ընդունվում են եւ ապահովացվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(շ.) 0—33

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթևեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ № 2 գնացքը՝** (I, II և III կարգի վագոն.) 10 ժ. 20 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 44 ր. կէսօր., Գանձակ՝ 3 ժ. 18 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 52 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 35 ր. երեկ., Բագու՝ 11 ժ. 43 ր. գիշ.։ **Մարդատար № 6 գնացքը՝** (միայն I և II կարգի վագոն.) 3 ժ. 33 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 29 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 46 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 53 ր. գիշ.՝ Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 20 ր. գիշ., Բագու՝ 8 ժ. 11 ր. առաւ.։ **Պօստատար № 4 գնացքը՝** (բոլոր կարգերի վագոններով) 11 ժ. 18 ր. գիշ., Աղստաֆա է հասնում՝ 2 ժ. 12 ր. ցեր., Գանձակ՝ 5 ժ. 29 ր. առաւ., Եւլախ, 7 ժ. 30 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 01 րօպէին կէսօրվայ, Բագու՝ 4 ժամ 52 րօպէին ցերեկվայ։ **Խառն № 106 գնացք՝** (IV կամ III կարգի վագոններով, երբ կարևորութիւն պատահի) 6 ժ. 32 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 10 ժ. 42 ր. առաւ., Գանձակ՝ 2 ժ. 57 ր. ցեր., Եւլախ՝ 6 ժ. 25 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 16 գիշ., Բագու՝ 7 ժ. 12 ր. առաւ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **Մարդատար № $^{74}/_{75}$ գնացքը.՝** (բոլոր կարգի վագոններով) 11 ժ. 48 ր. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 7 ժ. 01 ր. առաւ. ,Ալէքսանդրօպօլ՝ 10 ժ. 31 ր. առաւ., Էջմիածին կայար.՝ 3 ժ. 45 ր. ցեր., Ուլուխանլու՝ 4 ժ. 12 ր. ցեր.։ (Առանց Երևան մտնելու։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը Երևան ուղևորվում է 4 ժ. 37 ր. ցեր., և Երևան հասնում 5 ժ. 20 ր. երեկոյեան)։ Նախիջևան՝ 9 ժ. 26 ր. երեկ., Ջուլֆա՝ 11 ժ. 10 ր. երեկ.։ **Մարդատար-ապրանքատար № $^{78}/_{79}$ գնացքը.** 5 ժ. 34 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում՝ 12 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 32 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 4 ժ. 41 առաւ., Երևան՝ 11 ժ. 06 ր. առաւ., և այնտեղ դէնը չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **Մարդատար № 5 գնացքը՝** (բոլոր կարգի վագոններով) 5 ժ. 45 ր. երեկ., Միխայլովօ է հասնում 9 ժ. 51 ր. եր., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առաւ., **Պօստատար № 3 գնացքը՝** (բոլոր կարգի վագոններով 9 ժ. 50 ր. առաւ., Միխայլովօ է հասնում 1 ժ. 56 ր. կէսօր., Բաթում՝ 11 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդատար № 7 գնացքը՝** (II և III կարգի վագոններով) 10 ժ. 38 ր. գիշ., Միխայլովօ է հասնում 3 ժ. 08 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 42 ր. կէսօրին։

ԲՕՐԺՕՄ՝ **մարդատար № $^{9}/_{66}$ գնացքը՝** (բոլոր կարգի վագոն.) 3 ժ. 23 ր. ցեր., Գօրի է հասնում 6 ժ. 02 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 02 ր. գիշ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **Մարդատար № 5 գնացքը՝** 5 ժ. 07 ր. երեկ.։ **Պօստատար № 3 գնացքը՝** 8 ժ. 54 ր. առ.։ **Արագ № 1 գնացքը՝** 9 ժ. 56 ր. գիշ., որը այնտեղ դէնը չէ գնում։ **Խառն № 107 գնացքը՝** 9 ժ. եր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստատար № $^{72}/_{73}$ գնացքը՝** 8 ժ. 25 ր. առաւ.։ **Մարդատար-ապրանքատար՝ № $^{80}/_{81}$ գնացքը՝** 1 ժ. 40 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **Մարդատար № 6 գնացքը՝** 2 ժ. 50 ր. ցերեկ., **Պօստատար № 4 գնացքը՝** 10 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդատար № 8 գնացքը** 5 ժ. 33 ր. առաւ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ԲՕՐԺՕՄԻՑ՝ **Մարդատար № 6/10 գնացքը՝** 7 ժ. 58 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Ձմերային երթևեկութեան միջոցին որոշված է Թիֆլիսից Պետերբուրգ (յետ և առաջ) անմիջական, առանց վագոն փոխելու հաղորդակցութիւն՝ Բագու-Ռոստովի-Խարկովի վրայով Անդրկովկասեան գծի արագ № № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է մէկ միքստ վագոն I և II կարգի և մէկ վագոն III կարգի. բոլոր տեղերը պլացկարտերով են։

Նոյնպէս հաստատվում է Թիֆլիս-Մոսկվա յետ և առաջ, առանց վագոն փոխելու, հաղորդակցութիւն՝ Բագու-Ռոստովի և Կոզլովի վրայով՝ արագ № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է Միջազգային ընկ. մէկ միքստ վագոն I և II կարգի, որի համար վերցվելու է յաւելեալ արժէք. ամեն մէկ հազար վերստին 8 ր. I կարգում և 6 ր. II կարգում։ Թիֆլիսից-Մոսկվա հաշվում է 2877 վերստ։

Առանց վագոն փոխելու հաղորդակցութիւնը Թիֆլիս-Բագու-Ռոստով յետ և առաջ կատարվելու է արագ № 1 և 2 գնացքներով։ Բոլոր կարգերի տեղերը պլացկարտով են։

ԲԺԻՇԿ
Ց. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտովսկայա, № 66.
(ա.օ.) 130. 100—62

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ամսիս 22-ին, առաւօտեան ժամը 11-ին, ս. Մինաս եկեղեցում լինելու է ծխականների առաջին ընդհանուր ժողով՝ ընտրելու նոր երէցփոխ՝ պաշտօնից հրաժարված Մ. Ղազարեանի փոխարէն, որի մասին յայտնելով յիշեալ եկեղեցու չափահաս ծխականներին՝ խնդրում եմ որոշած օրը և ժամին շնորհ բերել եկեղեցի՝ ընտրութեանը մասնակցելու։
Գործակալ՝ Ղևոնդ քահ. Մամիկոնեան
32. 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԳՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ
Յարմարեցված «Ռուսահայ գրականութեան պատմութեան»։
ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ
Հրատարակութիւն «Գուտենբերգ» գրավաճառանոցի։
Գինն է 1 րուբլի։
(Խ.) 33. 2—1

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. և Մ.
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկօլայէվսկայա, № 36.
(ա.օ) 1212. 25—13

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ և ուղարկվեց բաժանորդներին
ՊԱՏԱՆԻ
ԱԼՄԱՆԱԽԻ II (IV) գիրքը։
Գինն է 20 կոպ.
ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ է 6 ԳՐՔԻ բաժանորդագրութիւնը. Թիֆլիսում՝ 1 ր., դուրսը՝ 1 ր. 25 կ., արտասահման՝ 5 ֆր.։
Յունվարի 15-ից խմբագրվելու է III (V) գիրքը։
Լոյս տեսած I, II, III, IV գրքերը միասին, ճանապարհածախսով, 70 կ.։
Հասցէն՝ Тифлисъ, Сурпъ-Минасскій пер. № 26, Мисаку Эприкянъ,
(Ղ.) 1213. 3—3

ԵՐԵՍՆԱՄԵԱԿ ԱՂԲԻՒՐԻ
Զիջանելով դպրոցական աշակերտների միահամուռ թախանձանքին, այս 1912 թ.
„ԱՂԲԻՒՐԻ“
տարեկան բաժանորդագինը դպրոցական աշակերտների համար դարձեալ թողնում ենք ՄԷԿ ՌՈՒԲԼԻ։
2 ր. վճարող աշակերտները կը ստանան և Աղբիւրի Ակունքը ու Աղբիւրի յաւելուածները։
Աղբիւրի յունվարի ճոխ ու բազմաբովանդակ №-ը ուղարկվելու է նրանց, որոնք վերանորոգել են իրանց բաժանորդագրութիւնը։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „АГБЮРЪ“
(Խ.Հ.Ղ) 26. 0—3

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպ. Հոգաբարձութիւնը
սրանով յայտնում է ի գիտութիւն, որ նա վաճառում է նոր կառուցած դպրոցական շէնքի մօտ հողաբաժիններ։ Այդ հողաբաժինների մակարդակը կարելի է տեսնել հոգաբարձութեան դիւանատանը ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից. առաւօտեան ժամը 12-ից մինչև 3-ը։ Իւրաքանչիւր հողաբաժին կը վաճառվի աճուրդով, որի համար և կը յայտարարվի առանձին։ Ցանկացողները կարող են ներկայացնել խնդրագիրը հոգաբարձութեան անունով։
(21, 26, 31) 18. 4—2

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են՝ րէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկակ., բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենաշատ ձեռքի ուղղումն), բ) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) սղագրութիւն. 3) դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և դատ-դատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։
(ա. օ.) 1193. 0—19

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.